

Q-38

174

Lucy V  
140



N<sup>o</sup> 141

2000

87



140

PH  
34958

ԱՋԳԱՐՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱՋԳԱՐՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԸ

անվ. 17.403



ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԴՐ. ԱԻԵՏԻԲ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

Կարդացած 15 յունիս 1883, Թիֆլիզում:



ԹԻՖԼԻԶ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ  
ՕՐԲԵԼԵՆ ՓՈԴՈՑ, 5  
1883



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս առաջի տետրով սկսվում է այն շարքը, որը պիտի պարունակէ իւր մէջ քաղաքատնտեսական առարկաների վերայ Թիֆլիզում, 15 յունվ. մինչ Յ ապրիլի Արծրունու թատրոնում կարդացած մեր եօթը դասախօսութիւնները: Այնպէս, որպէս ես սոցա այժմ հրատարակում եմ, տարբերվում է կարդացածից միմիայն իւր ընդարձակութեամբ. ինչ յարմար չէր ամբիօնից խօսուելու, կարող էր տեղ բռնել գրքի մէջ. այսպէս օրինակ, թւանշանների երկար շարքեր, ցուցակներ և այլն, որոնք դիւրըմբռնելի են միայն երբ մարդ նոցա աչքի տակ ունէ բռնած, բայց ծանրագիտու, երբ նա միայն հեռուից պիտի լսէ թւերը, այն ևս, եթէ նա կարողանայ նոցա մտքում տպաւորել:

Ամեն ջանք գործ եմ դրած — այս դասախօսութիւնները կարելիին չափ դիւրըմբռնելի անել ընթերցող հասարակութեան համար. ես աշխատած եմ բանեցնել պարզ ու հասարակ, բայց առարկայի բնաւորութեան ոչ անվարել լեզու: Ում, չ'նայած այդ հանգամանքին, ծանր կ'թուի սորան կարդալը, լաւ կ'անէ, եթէ չ'շարունակէ զայն, որովհետեւ ես համոզուած եմ, որ դժուարութիւնը այդ պարագայում մի այլ բանի, քան լեզուի մէջ պիտի որոնել, բայց որի որոշելը մեզ չէ պատկանում:

Մեր ընդհանուր առաջագիմութիւնը կախուած է նորանից, թէ որ աստիճանի գիտութիւնները կարող են ծաղկել մեզ մօտ. ես չեմ ճանաչում մի ազգ, որը մեծ եղած լինի առանց դորան: Բաւական չէ միայն գոյութիւն ունենալ, այլ պէտք է գոյութիւն ունենալ առաջագիմութեան մէջ. միայն այս վերջինն է, որ յիշվում է և արժանի է յիշուելու մարդկութեան ընդհանուր պատ-



28-139

140-99

4400-91



մութեան մէջ, որովհետեւ ընդհանուր պատմութիւնը լոկ  
ցուցակ չէ բոլոր ազգերի, այլ նա մարդկային մտքի և կեան-  
քի զարգացման պատմութիւն է: Բայց միտքը մղում է  
դէպի գիտութիւններ, որոնք կեանքի և բնութեան պայ-  
մանները ուսումնասիրելով, նորանոր ճանապարհներ են  
բացում մարդկային կեանքի ընթացքի համար:

Բայց նախ քան գիտութիւնները կարողանան ծաղ-  
կել մեզ մօտ, պէտք է ծանօթացնել մեր հասարակու-  
թեան այն աստիճանի հետ, որի վերայ կանգնած են նո-  
քա այժմ. պէտք է ստեղծել ուսումնականների մի ամբողջ  
լէզիօն, որոնք մտաւորապէս ինքզինքնին եղբայրակցու-  
թեան մէջ զգային ամբողջ աշխարհի գիտութիւններ մշա-  
կողների հետ: Միայն այդ պայմանով մենք կարող ենք ու-  
նենալ գիտութիւնների մէջ ուղղութիւն, գիտնականների  
որոշ և յարգելի դպրոցներ, շիօլաներ և դորա հետ միասին՝  
ինքնուրոյն կեանք: Այո՛, դա շատ դժուար գործ է, բայց  
կրկնում ենք՝ նա անհրաժեշտ է: Այդ նպատակի համար  
մենք նա աւելի մեծ գոհողութիւններ, ջանքեր պիտի ա-  
նենք, որ մեր այժմեայ հայ սերունդը հազիւ թէ կարող է  
այդ կողմից ներշնչուել մեր սեպհական անցեալից:

Նւ արդարեւ, եթէ մենք ունենք էլ մի հին կլասիկա-  
կան գրականութիւն, այդ գրականութիւնը ինքնուրոյն  
մտքերի նկատմամբ, թէ փիլիսոփայութեան և թէ մարդ-  
կային ոգու այլ արտադրութիւնների մէջ եթէ ոչ բնաւ,  
գոնէ շատ քիչ բան է տալիս մեզ համեմատած շատ այլ  
ազգերի հին գրականութիւնների հետ: Մտքերի այդ չը-  
քաւոր գրութիւնը առանց այն չէր կարող անցնել, որ  
ազդեցութիւն չունենար մեր քաղաքական և հա-  
սարակաց հին կեանքի վերայ: Մենք չենք տեսնում  
Հին-Հայաստանի անուան հետ սերտ և անանջատելի  
կերպով կապուած մի որեւիցէ քաղաքական կամ հասարա-

կաց վերին զարգացման հասցրած հաստատութիւն, որի  
մէջ, այսպէս ասած կենդրոնացած լինէր հայկական ոգու  
ամենագուտ նիւթը, էսսէնցը և որով կարելի լինէր ճա-  
նաչել թէ ինչ բան է հայկական ոգին ինքը, թէ ինչ  
բաների մէջ նա իսկապէս ստեղծող էր: Բայց մենք գիտենք  
սակայն, թէ ինչ բաների մէջ էր արտայայտվում Հին յոյնե-  
րի և հռոմայեցիների ազգային ոգին. մեզ այժմ քաջ  
յայտնի են առաջինների գեղարուեստական նուրբ ճաշա-  
կը և նոցա դէմօկրատիկական ոգին և երկրորդների սէրը  
դէպի խիստ մտածողութեան եղանակը, որի արտադրու-  
թիւնն էր իւր շատ մասերում դեռ մինչ այժմ ամբողջ Նւ-  
րոպայում իշխող հռչակաւոր հռոմայական իրաւունքը:

Բայց թէ Հայերը ևս ունեցած լինեն դոյա նման  
որոշ ուղղութիւն կեանքի, ուրեմն և գրականութեան մէջ,  
այդ նամանաւանդ կասկածելի է թւում մեզ, որ նա կը  
իմացուէր և առանց հին գրականութեան վկայութիւն-  
ների. որովհետեւ ոգու որոշ գոյները ժառանգաբար կ'անց-  
նէին մեր նախնիքների ներկայ որդկերանց վերայ: Այդ  
ժառանգութիւնն է, որ մենք չունենք և, չ'նայած մեր  
պատմական գոյութեան հնութեան, մենք դեռ կարօտու-  
թիւն ունենք մեր բնաւորութիւնը նորից ձևաւորելու  
քաղաքակրթութեան վեհ գործին ծառայելու համար: Ինչ  
ասել կ'ուզէ որ, վերջ ի վերջոյ, քաղաքակրթութեան գաղա-  
փարն է, որը միակ բաւականաչափ բարձր է մեր ոգու  
վրայ իշխելու համար և որի համար միայն կարելի է ա-  
մեն գոհողութիւններ յանձն առնել: Հեռու ապագան  
նախատեսելը մեր գործը չէ, որովհետեւ մեր կարողութիւ-  
նից վեր է. այդ պատճառով մենք չ'գիտենք ինչ դեր է  
վերապահած հայ ազգին քաղաքակրթութեան գործի մէջ.  
բայց այդ զգոյշութիւնը ապագայի նկատմամբ ուժեղաց-  
նում է մեր համարձակութիւնը պնդելու հետեւալը՝ ե-



Թէ երբէք մենք պիտի ընդհանուր քաղաքակրթութեան գործող անդամի պարծանքը ձեռք բերենք, այդ պէտք է և կարող է կատարուել միայն և միմիայն գիտութիւնների շնորհիւ: Ամեն բան, որ կ'նպաստէ այդ վերջին՝ մի վերին աստիճանի քաղաքակրթական գործ է:

Այդ մտքով մեզ մօտ արդէն սկզբնաւորութիւններ արած են. բայց դեռ միակ գործը, որը, գիտնական ոտքի վրայ դրած լինելով Հանգերձ, ժողովրդականութեան պատիւը վայելելու բաղձն ունէ այսօր Հայերիս մէջ — այդ մանկավարժութիւնն է: Եթէ որքան և իցէ կրիտիկական ոգի իշխում է մեր ժողովրդական կեանքի մի ճիւղի մէջ — այդ մանուկների չենք ասում դաստիարակութեան, որը դեռ չ'կայ, այլ ուսումնասիրութեան մէջն է նկատվում: Նոյն կրիտիկական ոգին ոչ միայն պիտի զարգանայ և յարատեւէ մանկավարժութեան մէջ, այլ և պիտի մտնէ մեր բոլոր այլ ժողովրդական գործառնութիւնների մէջ: Դոցանից մէկն է՝ ժողովուրդի տնտեսութիւնը իւր ամենաընդարձակ մտքով, որի մէջ պարունակվում է նաև Հասարակաց կեանքը բոլոր այն Հարցերով Հանգերձ, որոնք ուղղակի շօշափում են ժողովուրդի բարօրութեան: Այդ ընդարձակ դաշտնէ, որի ուսումնասիրութեան նուիրում է քաղաքատնտեսութիւնը և կամ, որպէս նորան նաև այլապէս անուանում են, Հասարակաց գիտութիւնը, դէպ որը ճաշակ պատրաստելու Համար մեր Հասարակութեան մէջ ձեռնարկուած են ներկայ դասախօսութիւնները:

Այս Հրատարակութեան մէջ մենք մի բան ենք շատ ամփոսում, այդ այն է, որ Հայկական կեանքը դեռ բաւականաչափ ուսումնասիրուած չէ, որպէս զի կարողանալինք մեր ասածները Հաստատելու Համար յենուել նաև Հայկական կեանքից վերցրած փաստերի, իրողութիւններ:

րի վերայ: Լինէ Թէ այս Հրատարակութիւնը արժանանայ մի երկրորդ տպագրութեան — մենք ամեն ջանք գործ կ'դնենք այդ թերութիւնը կարելիին չափ լրացնել:

Ի վերջոյ պարտք եմ Համարում յայտնել իմ խորին շնորհակալութիւնը մեծապատիւ պարոն Գնդապետ Ալէքսանդր Թովմայեան Մելիք-Հայկազեանցին, որի լուսաւոր առատաձեռնութեան եմ պարտական ներկայ և դեռ յետևելու դասախօսութիւնների Հրատարակութեամբ:

ՀԵՂԻՆԱԿ:



Տիկիւններ և Պարոններ.

Մեր դասախօսութիւնների շարքը մենք այսօր սկսում ենք ազգաբնակութեան ունումով: Սյստեղ իսկոյն հարց է ծագում, թէ ինչ կապ ունի ազգաբնակութիւնը տնտեսական երևոյթների հետ, թէ ինչ գաղտնիք է յայտնում ազգաբնակութիւն ասած բանը և թէ, վերջապէս, ինչ տեսակ հետազօտութիւններ կարելի է անել ազգաբնակութեան վերայ:

Առ հասարակ, ազգաբնակութիւն ասելով մարդ հասկանում է մի որ և իցէ տեղի մարդկային շուռների թիւը: Ասում են Կովկասի ազգաբնակութիւն և դորանով հասկանում են այն բոլոր մարդիկը, որոնք բնակվում են Կովկասում: Մարդիկ, այսինքն և՛ տղամարդիկ, և՛ կանայք, և՛ ամեն հասակի երեխաներ: Նոյն մտքով ասում են՝ Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի ազգաբնակութիւն, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ազգաբնակութիւն և այլն:

Ես Ձեր ուշադրութիւնն եմ դարձնում այն տեղերի անունների վերայ, որոնց ես վերը լիշեցի. Կովկաս, Ռուսաստան, Պարսկաստան, Տաճկաստան, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլն: Դոքա բոլորը այնպիսի երկիրներ են, որոնցից իւրաքանչիւրը կազմում է քաղաքական կամ վարչական մի ամբողջութիւն: Ռուսաստան ասելով մենք հասկանում ենք այն ամբողջ հողի տարածութիւնը, մինչև ուր տարածուած է ռուսաց օրէնքների իշխանութիւնը: Կովկասը կոչվում է միայն այն տարածութեամբ հողը, որը օրէնքով ճանաչուած է որ-



պէս Կովկաս. Տաճկաստանը այն տարածութեամբ Հոդն է, որը գտանվում է Սուլթանի բարձրագոյն իրաւասութեան ներքոյ և այլն:

Բայց նկատեցէք, Տիկիններ և Պարոններ, որ մի քաղաքական կամ վարչական միութիւն կազմող երկիր կարող է այնպիսի մասերից կազմուած լինել, որոնց բնակիչները իրար հետ գուցէ մօտիկ յարաբերութիւններէ մէջ չեն: Վերցնենք օրինակի համար Ռուսաստանը: Ձեզ յայտնի է, թէ որքան երկիրներ միասին վերցրած կազմում են այդ տէրութիւնը: Արդ, հարցնում եմ ես, ինչ առանձին շօշափելի յարաբերութիւն ունէ արևելեան Սիբիրի մի ժողովուրդ Ռուսաստանի լեհական մի նահանգի ժողովուրդի հետ: Նմանապէս Տաճկաստանի հայկական նահանգների բնակիչները, ինչ մի ընդհանուր բան ունին Սրաբիայի բնակիչների հետ բացի նորանից, որ և՛ նոքա և՛ սոքա մի և նոյն տէրութեան են պատկանում: Ակներև է, որ այլ ընդհանուր բան նոցա մէջ չը կայ և կամ, եթէ կայ, նա շատ աննշան է:

Այդ մի քանի օրինակներով ես ուզեցի հասկացնել, որ այնպէս, ինչպէս այդ հասկացվում է հասարակօրէն, ազգաբնակչութիւնը կարող է ըմբռնել իւր մէջ և այնպիսի ժողովուրդներ, որոնք, իրար հետ ոչ բարոյական և ոչ տնտեսական կապ ունենալով, չեն կազմում միասին մի ընդհանուր տնտեսական մարմին: Բայց նախ տեսնենք, թէ ինչպէս մի ազգաբնակչութիւն կարող է մի ամբողջ մարմին կազմել և թէ ինչ պէտք է այդ բաւով հասկանալ:

Ամենքին յայտնի է, որ մարդս իւր պիտոյքները մատակարարելու համար, անհրաժեշտ կերպով կարօտութիւն է գգում դիմել այլ մարդկերանց արդիւնաբերութեան: Այդ կարօտութիւնը այնքան է մեծ, որքան

մեծ են և բազմակողմանի մարդուս պիտոյքները: Մի հասարակ և լետ ընկած գիւղ, որպէս կարող էք Ձեզ երևակայել, չէ կարող ունենալ զարգացած արհեստներ և, չնայած դորան, այդ գիւղի բնակիչները, փակուած իրանց մէջ, կարող են և կարօտութիւն չը գգալ այն բոլորի մէջ, ինչ իրենց գիւղի մէջ չէ արտադրվում: Դորա հակառակ, մի քաղաքացի, ընտելացած կեանքի բոլոր փափկութիւններին, կարօտ բարձր մտաւոր սնունդի, որպէս նաև հոգեկան բազմակողմանի զուարճութիւններին — տնտեսապէս կապուած է առաջնից անհամեմատ աւելի մեծ թուով մարդկերանց հետ:

Այդ իրար հետ տնտեսապէս կապուած լինելն է, որը կազմում է հասարակութեան հիմքը և կամ մի տեղի բնակիչների տնտեսական միութիւնը և կամ տնտեսական մարմինը: Ես ասում եմ մի տեղի, բայց այդ կարող է նշանակել մի փոքրիկ ժողովուրդ պարունակող երկիր, որպէս նաև մի մեծ երկիր, որպէս մի Ֆրանսիա, մի Գերմանիա, մի Չինաստան և այլն: Վերը բերած օրինակի համեմատ մենք կարող ենք ասել, որ այն տնտեսական միութիւնը աւելի մեծ է, այն միութիւնը աւելի շատ թուով մարդիկ է պարունակում, որքան մի երկիր աւելի քաղաքակրթուած է, յառաջադիմութեան մի աւելի բարձր աստիճանի վրայ է կանգնած: Պատճառը յայտնի է. որքան մի երկրի բնակիչներ աւելի քաղաքակրթուած են, նոյնքան ևս նոցա պիտոյքները առաւել են, նոյնքան նոքա աւելի մեծ կարօտութիւն ունին միմեանցից և այդ պատճառով, մի փոքրիկ ժողովուրդ չէ կարող այնքան արհեստներ ծաղկեցնել, որ բաւականութիւն տայ բարձր քաղաքակրթութեան վերայ կանգնած մեծապահանջ քաղաքացիներին: Ահա ինչու Տաճկաստանի այլ և այլ տեղերը իրօք չեն կազմում մի



ընդարձակ տնտեսական միութիւն, մի Համայնք, մի ամբողջ մարմին, մինչդեռ Եւրոպայի ամենալաւաջագէտ երկիրները, որպէս Անգլիա, Փրանսիա, Գերմանիա, Բելգիա և այլն, քաղաքական միութեան Հետ միասին ներկայացնում են նաև նոյնքան մեծ տնտեսական Համայնքներ, միութիւններ, տնտեսական մարմիններ <sup>1)</sup>։

Ազգաբնակչութիւնը, Տիկիները և Պարոնները, քաղաքա—տնտեսական Հետազոտութիւնների առարկայ է. բայց այդ Հետազոտութիւնները, ճշմարիտ արդիւնաւէտ

<sup>1)</sup> Տաճկաստանի և Ռուսաստանի վերայ մենք տեսնում ենք օրինակներ, թէ ինչպէս մի տէրութեան սահմանները աւելի ընդարձակ են, քան թէ տնտեսական միութեան սահմանները. այլ խօսքերով այդ երկիրները բովանդակում են իրանց մէջ ոչ թէ մի, այլ մի քանի տնտեսական միութիւններ, մարմիններ, որոնք իրար Հետ սերտ յարաբերութիւն չունեն, մինչդեռ եւրոպական այլ տէրութիւնների մեծամասնութեան մէջ՝ որպէս Անգլիան է, Ֆրանսիան է և այլն, մենք տեսնում ենք օրինակներ, թէ ինչպէս մի տէրութեան քաղաքական սահմանները միևնոյն ժամանակ մի տնտեսութեան, մի տնտեսական մարմին սահմաններ են կազմում։ Այդ Հանգամանքը առանց նշանակութեան չէ յիշեալ երկրների նոյն իսկ քաղաքական գոյութեան և ոյժի համար։ Մի տէրութիւն աւելի ուժեղ է, որքան նա աւելի մեծ և բաւիս նշանակութեան աւելի մօտ տնտեսական Համայնք, կազմակերպուած միութիւն է կազմում։ Վան, ընդհակառակը, նաև տնտեսական մարմիններ, որոնք աւելի մեծ են, քան նոյն քաղաքական սահմանները. փոքրիկ, բայց տնտեսապէս շատ զարգացած տէրութիւնները, որպէս Բելգիա և այլք, այդ գիպուածումն են։ Նոյն իսկ այսօրուայ եւրոպական մեծ տէրութիւնների համար կարելի է նոյնը ասել։ Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան, Գերմանիան իրար Հետ այնքան առեւտրական յարաբերութիւններ ունեն, նոքա այնքան կախուած են մէկը միւսից, որ Հաղիւ կարելի լինի ասել, որ նոյնից իւրաքանչիւրը իրա Համար մի բոլորովին առանձին տնտեսական Համայնք կազմում լինի։ Դա այն Հանգամանքն է՝ որ ճնշեցրել է Weltwirtschaft նոր բառը, որ նշանակում է Համաշխարհային տնտեսութիւն։

լինելու Համար, պիտի կատարուին այնպիսի ազգաբնակչութիւնների վերայ, որոնք տնտեսական մտքով մի ամբողջութիւն, մի տնտեսական մարմին են կազմում։

Դառնալով գէպի ազգաբնակչական երևոյթները, որոնք քաղաքատնտեսի Համար ամենակարեւոր և ամենատարրական գիտելիքների առարկան են կազմում, ես Զեր ուշադրութիւնն եմ դարձնում նախ և առաջ այս Հանգամանքի վերայ, որ Բախիշի լեւալ, Ժոհաննի Լեւալ, փոփոխում է և իմ խօսքը այստեղ այն փոփոխման վերայ է, որը առաջանում է ճնշումների կամ մահերի առաւելութիւնից և ոչ թէ այն փոփոխման վերայ, որը կարող էր յառաջանալ գաղթական շարժումներից։

Ազգաբնակչութեան մեծութեան փոփոխուելը, Տիկիները և Պարոնները, նոյն իսկ գուցէ իւր տարրականութեան պատճառով, շատերից աննշմար է անցնում. գուցէ շատերին յալտնի է այդ երևոյթը, բայց բաւական չէ մի բան միայն գիտենալ, հարկաւոր է մի և նոյն ժամանակ այդ բանի նշանակութիւնը ըմբռնել։ Արդ, բնակիչների թւի փոփոխուելը քաղաքատնտեսի Համար կարեւոր նշանակութիւն ունէ։ Ինչո՞ւ։ Ահա ինչ պատճառներով։ Կան Հասարակաց կեանքի մէջ բազմաթիւ հարցեր, որոնց նպատակալարմար վճռելու Համար հարկաւոր է և անհրաժեշտ՝ գիտենալ բնակիչների թիւը։ Օրինակի Համար բոլոր երկիրներում յաճախ անգամ ներկայացել է Հողատիրութեան հարցը։ Դիցուք հարկաւոր է վճռել, թէ ինչ քաղաքականութեան պիտի հետևէ տէրութիւնը, որպէս զի գիւղացին կարողանայ ամենանուագը այսքան կամ այնքան մեծութեան կտոր հողի տէր դառնալ կամ մնալ։ Այդ հարցը վճռելու Համար ոչ թէ միայն հարկաւոր է իմանալ թէ երկրի մեծութիւնը և թէ գիւղական բնակիչների թիւը այն



րուպէում, երբ հարցը պիտի վճռուէ, այլ և օրէնսդրի աչքին պիտի ներկայ լինի և այն, որ այսօրուայ բնակիչների թիւը կարող է փոխուել ժամանակի ընթացքում. իսկ այդ այն կարեւորութիւնը ունէ, որ օրէնսդրը, լիջեալ հողատիրութեան օրէնքի տեղողութիւնը ապահովելու համար, մի և նոյն ժամանակ ստիպուած պիտի լինի մտածել և այն միջոցների մասին, որոնք կարող են չէզոքացնել բնակիչների թւի փոփոխուելուց առաջանալու հետեանքները: Սա մի օրինակ էր, բայց գորա նմանները կարելի կ'լինէր տասնեակներով բերել:

Մենք դեռ կ'վերադառնանք բնակիչների թւի փոփոխուելու պատճառներին և կ'պատասխանենք այն հարցին, թէ մինչ ուր կարող է այդ թիւը աճել: Միայն թէ նախ, քան այդ հարցերը պարզաբանելու, մեզ հարկաւոր է դեռ այս բանը իմանալ, թէ արդեօք մի երկրում, ուր ազգաբնակչութիւնը մի տնտեսական միութիւն կամ տնտեսական համայնք է կազմում և մի որոշեալ ժամանակում ամենաշատը որքան բնակիչներ կարող են լինել: Այս հարցը ես կը ցանկալի աւելի պարզ ձևով ներկայացնել, թէպէտ և գիտնականապէս մտածելու սովոր մարդկերանց համար սղմուած ոճը մթութեան մի պատճառ չէ: Այս հարցով ահա ինչ եմ ուզում ասել: Ենթադրենք, որ մեր վերը լիշած տնտեսական համայնքը Երևանեան նահանգն է, իսկ որոշուած ժամանակը՝ 1883 թիւն է. արդ, հարցնվում է, թէ Երևանեան նահանգը 1883 թուին ամենաշատը որքան բնակիչներ կարող է ունենալ:

Եթէ ես այս հարցը դրեցի, այդ ոչ թէ իսկապէս նորան լուծելու համար էր, այլ միայն նորա համար, որ ցոյց տամ նորա լուծելու կարելիութիւնը: Արդ, որքան

իսկ է, որ բնակուելու համար հարկաւոր է ապրել, նոյնքան իսկ է, որ ապրելու համար հարկաւոր են յայտնի չափով ապրուստի միջոցներ: Բայց այդ միջոցները կարող են զանազան մեծութեան լինել, նայած թէ ինչ տեսակ ապրուստ է վերցնվում որպէս հիմք: Ապրուստ կայ, որ մարդուս ֆիզիկապէս ապրելու կարելիութիւն է տալիս, դա՛ լետին աղքատի և մուրացկանի ապրուստի չափսն է. ապրուստ էլ կայ, որ բացի ապրելուց նաև կարելիութիւն է ստեղծում աշխատել տնտեսապէս, դա՛ այժմեան բանւոր դասի ապրուստի չափսն է. ապրուստ էլ կայ, որ բացի նորանից, որ թույլ է տալիս կեանքը պահպանել և ֆիզիկապէս աշխատել, նաև մտաւոր պարապմունք է թույլ տալիս և այլն:

Վերցնենք նախ, որպէս հիմք, առաջնագոյն լիշած ապրուստի մեծութիւնը և իմանանք, թէ Երևանեան նահանգը, այն ոյժերով, որ նա ունէր 1883 թուին, որքան այդ տեսակ մարդիկ կարող է իւր մէջ բնակեցնել:

Մեզ յայտնի է և այդ՝ ֆիզիոլոգներն են գտած, թէ մարդուս ֆիզիկական կեանքը պահպանելու համար հարկաւոր են մի որոշ չափով սննդական նիւթեր, որպէս են ազօտ, ածխածին և այլն: Եւ մեզ յայտնի է նոյնպէս, որ այդ նիւթերը մեր մարմնի մէջ մուծանելու համար, մեզ բաւական է օրէնը մի յայտնի չափով հաց և այլ բուսեղէններ ընդունել: Ենթադրենք, թէ այդ յայտնի չափսն է տարեկան հաշւով հինգ փութ ցորեն, իսկ այն բոլոր սննդական նիւթերը, ինչ Երևանեան նահանգը 1883 թուին կարող է արդիւնաբերել թէ ցորենով ու այլ բուսեղէններով և թէ իւր խաշիններով, հաւասար լինի տասը միլիօն փութ ցորենի սննդարարութեան: Այդ թուերը մի կողմից հինգ փութ և միւս կողմից



տասը միլիոն փութ, իսկական թուեր չեն, այլ միայն ենթադրական, բայց խորը և մանրախուզ հետազոտութիւնները կարող են միջնորդել իսկականին գոնէ մօտաւորապէս համապատասխանող թուերը: Բայց վերը ենթադրած թուերին համեմատ մենք պէտք է մտածենք, որ մեր որոշած տարուայ մէջ, Երևանեան նահանգը կարող է բնակեցնել իւր մէջ ոչ աւելի, քան տասը միլիոն բաժանուած հնգի վերայ, այսինքն՝ 2,000,000 մարդ:

#### Տիկիններ և Պարոններ

Ոչ մէկ հասարակութեան իդէալը չէ կարող լինել, այնքան անդամներ ունենալ և ոչ մի երկրինը՝ այնքան բնակիչներ, որ սոքա իրենց չափազանց բազմութեամբ, ստիպուած լինէին բաւականաձեով միայն նորանով, ինչ կարող է մարդուս ոչ աւելի քան կենդանութեան մէջ պահել: Բաւական չէ միայն ապրել, հարկաւոր է միևնոյն ժամանակ առաջադիմութեան մէջ ապրել, այսինքն յարմարեցնել կեանքը ու կենցաղավարութիւնը այն գաղափարին, որի իրագործումով մարդս կարծում է աւելի ճիշտ կերպով կարողանալ կատարել իւր կոչումը այս աշխարհում: Այդ գաղափարին կոչում են իդէալ, իսկ այն բոլոր միջոցները, որոնք հնարվում են և կամ գործ են ածվում իդէալին աւելի հաւատարիմ կերպով ծառայելու համար — կոչվում է կուլտուր, որը միևնոյն է թէ քաղաքակրթութիւն: Կուլտուրը, քաղաքակրթութիւնը ստեղծում է մարդուս մէջ կուլտուրական կամ քաղաքակրթական կարիքներ կամ պահանջներ. իսկ քաղաքակրթական պահանջները, իրանց հարկադրութեամբ, գրեթէ նոյն ոլոր ունին, ինչ ունին բնական կոչուած պահանջները, որոնցից ամենագլխաւորը սնունդն է միայն կեանքը յարատեւելու չափով: Ուրեմն պահանջներն մէջ

պէտք է զանազանել բնական անհրաժեշտ պահանջներ և այսպէս կոչուած փոխադրական պահանջներ, որոնցից առաջինները ծառայում են մարդուս մարմնաւոր կենդանութեան. իսկ երկրորդները — հասարակութեան մտաւոր և բարոյական յառաջադիմութեան: Բացի այդ երկու կատեգորիաների բաժանելուց, նոյնպէս կարելի և հարկաւոր է որոշել քաղաքակրթական պահանջների երկու տեսակները, որ մենք շուտով կը բացատրենք:

Ինչո՞ւմ է դործը: Նորանում, Տիկիններ և Պարոններ, որ մեզնից քաղաքակրթական կոչուած պահանջների մի մասը այնպիսիներ են, որ մի տնտեսական համայնքի, մի հասարակութեան բոլոր անդամներին են վերաբերում. իսկ մի այլ մասը այնպիսի պահանջներ են, որոնք այդ համայնքը կազմող հասարակութեան միայն այս կամ այն կարգի անձերին են վերաբերում և ոչ ընդհանրութեան: Գտնել, թէ որոնք են այդ ընդհանուր քաղաքակրթական պահանջները, շատ դժուար չը պիտի լինի. բաւական է համեմատել կենցաղավարութիւնը և կամ պահանջները մի մարդու, որը պատկանում է քաղաքակրթութեան մի քանի մեծ շրջաններ անցած ազգի, մի այլ մարդու հետ, որը պատկանում է քաղաքակրթութեան ամենաստոր աստիճանի վերայ կանգնած մի ցեղին: Այդ համեմատութեամբ դուք կը տեսնէք, որ քաղաքակրթութեան ազգի նոյն իսկ ամենախեղճ դասին պատկանող մի անհատ, մի մշակ, մի բանւոր աւելի մեծ պահանջներ ունէ, քան մի ոչ քաղաքակրթութեան ցեղին պատկանող մի անհատը, որը թերեւ առաջինից մի աւելի բարձր հասարակաց դիրք ունէ: Այդ աւելի մեծ պահանջը արտայայտվում է կեանքի գրեթէ բոլոր կէտերի մէջ. քաղաքակրթութեան ազգի պատկանող նոյն իսկ ամենահամեստ կեանքին սովոր մի անհատը ունէ մի ա-



ւելի բարձր գաղափար և՛ սնունդի և՛ բնակարանի և՛ հագուստի և՛ կրթութեան և՛ կեանքի ապահովութեան վերայ. այնպէս որ այդ կը լինէր մահուան պատժի դատապարտուել, եթէ այս կամ այն պատճառով նա ստիպուած լինէր ենթարկուել սոսկ բնութեան ոյժով իշխուած մարդկային ցեղի կեանքին:

Այն, ինչ մի ազգի, մի հասարակութեան ամենաստոր դասակարգի անձերից կեանքի համար անհրաժեշտ են ճանաչուած, կազմում են դոյն իսկ ազգի կամ հասարակութեան քաղաքակրթական ընդհանուր պահանջների չափսը:

Քաղաքակրթութիւնից առաջացած պահանջները, այժմ հարկ է նկատել, անհամեմատ աւելի շատ են, քան թէ բնական, այսինքն միայն կենդանութեան համար անհրաժեշտ պիտոյքները: Գործմէջ համոզուելու համար բաւական է համեմատել մի ամենահամեստ պահանջների տէր եւրոպացու տարեկան ծախքը մի վայրենի և գրեթէ միայն կեանքը պահպանելու կարօտ հնդկի ամերիկացու հետ: Այն, ինչ սուղին համար անհրաժեշտ է համարվում, երկրորդի համար կարող է փարթամութիւն թուալ, բայց առաջնի համար տասնը և երկրորդի համար հինգը ապրելու համար հաւասար կերպով անհրաժեշտ են համարվում, որովհետեւ այն կեանքը որին սովոր է ստոր կրթուածը, բաւականութիւն չէ կարող տալ աւելի բարձր կրթուածին:

Որովհետեւ քաղաքակրթական կամ կուլտուրական պահանջները իրենց չափսով անհամեմատ աւելի մեծ են և բազմաթիւ, քան բնական կոչուած պահանջները. իսկ միւս կողմից, որովհետեւ անհրաժեշտ պահանջների չափսը փոխվում է նայած մի ազգի քաղաքակրթութեան

աստիճանին, այդ պատճառով ամեն անգամ, երբ խօսք կը լինի անհրաժեշտ պահանջների կամ պիտոյքների մասին, այդ բառով չը պէտք է հասկանալ միայն այն, ինչ մարդու ֆիզիկական կենդանութիւնը պահպանելու համար է անհրաժեշտ, այլ դորա հետ միասին պիտի հասկանալ ամեն տեսակ պահանջներ ճիշտ թէ այն չափով, որից սակաւ մի ազգի հասարակաց կեանքի բնաւորութիւնը չէ թոյլ տալիս ունենալ: Այս բանը չը պէտք է մոռանալ և դորան մենք դեռ կը լիջենք, երբ մեր եօթերորդ դասախօսութեան մէջ բանւորական օրավարձի վերայ կը խօսենք:

Բայց ես մի տասը րոպէ առաջ ասացի, որ բացի ընդհանուր քաղաքակրթական պահանջներից կան նաեւ ոչ ընդհանուր պահանջներ: Եւ որոնք են դոքա: Գոքա Տիկիներ և Պարոններ, այն պահանջներն են, որոնց ես կանուանեմ *բարեկամային պահանջներ*: Մենք այս րոպէին կը պարզենք այդ խօսքի նշանակութիւնը:

Եթէ մի քանի հարիւր հազար և նոյն իսկ մի քանի տասնեակ միլիոն մարդիկ կազմում են միասին մի քաղաքական և տնտեսական մարմին, այդ մարմնի բոլոր անդամները անպատճառ միեւնոյն պարապմունքի տէր չեն: Երբ մի ազգի, մի համայնքի տնտեսական կեանքը զարգանում է, այդ զարգացումը կարելի է լինում միայն նորանով, որ այդ ազգի պարապմունքները կամ արտադրութիւնները գառնում են բազմակողմանի, այնպէս որ ազգի բոլոր անդամները չեն զբաղվում միայն մի տեսակ գործով, այլ ընդհակառակը իւրաքանչիւր արհեստ և կամ արհեստի մի մասը պահանջում է միայն իւրանով զբաղուող և բացառապէս այդ գործի համար կրթուած ու պատրաստուած մարդիկ: Գորա հետեւանքը այն է լինում, որ մի երկրի բնակիչները,



տնտեսական ճիւղերի համեմատ, բաժանվում են նոյնքան շատ դասակարգերի: Այդ այդպէս է, որ բոլոր հողագործներին անուանում են գիւղական կամ հողագործական դաս, բոլոր այն անձերին, որոնք արհեստներով են պարապում՝ արհեստաւորների դաս, այդ այդպէս է, որ գոյացել են հողատէրերի դասը, վաճառական դասը, բանւորների դասը, դործարանատէրերի դասը, գրողների դասը և այլն և այլն:

Արդ, նկատեցէք այժմ, որ այդ դասերից իւրաքանչիւրը իւր սկզբնաւորութեան և զարգացման պատմութիւնը ունէ. և նոյն իսկ այդ պատճառով, այնպէս ինչպէս նոքա այժմ կան այլ և այլ երկիրներում մի անգամից չեն ստեղծուած, այլ կամաց — կամաց շարժւած են: Նոքա միմեանցից զանազանվում են այն դիրքով, որը նոցանից իւրաքանչիւրը բռնում է տէրութեան, այսինքն տնտեսական համայնքի քաղաքական միութեան մէջ. նոքա զանազանվում են միմեանցից իրանց, ինչպէս ասում են, հասարակաց դիրքով տէրութեան մէջ: Նոյն իսկ պատճառով, որ նոքա զարգանում են աստիճանաբար, միւսնոյն դասի հասարակաց դիրքը մի ազգի կեանքի այլ և այլ շրջաններում նոյնը չէ մնում. մէկը բարձրանում, ուժեղանում է, մի այլ դաս, կատարած լինելով իւր պատմական դերը, կորցնում է իւր ոյժը և գուցէ միանգամայն անյայտանում:

Այդ այդպէս լինելով, հասկանալի է որ նայած պարապմունքի տեսակին և հասարակաց դիրքին և կամ քաղաքական ոյժին, մի անհատ միւսից պէտք է զանազանուի նաև իւր կենցաղավարական եղանակով, ուրեմն և այն պահանջներով, որոնք սերտ կապուած են այս կամ այն կենցաղավարական եղանակի հետ: Ինչիսօք կայ, որ մի բժիշկի համար կարևոր է և անհրաժեշտ հա-

մալսարանական ուսումը. ուրեմն բարձրագոյն կոչուած ուսումը մի անհրաժեշտ պահանջ է նորա համար, մինչդեռ մի ատաղձագործի կամ կոշկակարի համար բարձրագոյն ուսումը, իրերի ալժմեային դրութեան մէջ, ոչ անհրաժեշտ է և ոչ կարևոր: — Վերցրէք վաճառականութիւնը և ուսումնասիրեցէք նորա բնաւորութիւնը, այսինքն այն՝ ինչ նա պահանջում է վաճառականից և համեմատեցէք այն պահանջմունքների հետ, որ տեսնում է երկրագործութիւնը մի գիւղացուց: Նոցա գիտելիքները միմեանցից տարբեր են, որպէս նաև նոցա կենցաղավարութիւնը. եթէ մէկի գործը պահանջում է նստակեցութիւն, անշարժութիւն, միւսինը ընդհակառակը, շարժուն կեանք, ճանապարհորդութիւն, գրագրութիւն, ծանօթութիւններ անձերի և իրերի հետ և այլն: Օրինակները կարելի էր մինչ անվերջ շարունակել, բայց այս մի քանիսներով պարզած եմ համարում այն միտքը, որ արհեստների զանազան բնաւորութիւն ունենալը ստեղծում է նոցա մէջ, որոնք այդ արհեստներով պարապում են, նաև իրարից շատ թէ քիչ տարբեր պահանջներ և որ եթէ մէկի համար մի բան անհրաժեշտ է, միւսի համար նոյն բանը, նոյն պահանջը անհրաժեշտ չէ:

Եթէ արհեստների առանձնայատկութիւնները ճշնեցնում են մարդկերանց մէջ նոցա յատուկ պահանջներ, դասակարգերի անմիատեսակ զարգացած լինելը մի յայտնի ժամանակում, նոցա ոչ միատեսակ հասարակաց դիրք ունենալը տէրութեան մէջ առիթ է տալիս, որ բոլոր դասակարգերը մի տեսակ չեն մասնակցում քաղաքակրթութեան այլ և այլ բարիքների վայելման մէջ: Մի երկու օրինակ բաւական կը լինին այս միտքը պարզելու: Իրաւ է որ երաժշտութիւնը մի մասնագիտութիւն է, որպէս շատ ուրիշները. բայց և այս անհրաժեշտ է, որ երաժշ-



տութիւնը միւսնոյն ժամանակ մի ազնիւ միջոց է նուրբ կրթութեան: Քանի որ երաժշտական արհեստը դեռ տարածուած չէր Եւրոպայում, ովքեր էին նորանով պարապողները: Գրեթէ միայն զէպի երաժշտութիւնը անձնական ձգտում ունեցող մարդիկ: Բայց այն օրուանից, երբ երաժշտութեան մէջ սկսուեց տեսնուել մի գաղափար, մի ինչ որ մեծ ոյժ, որից ներշնչուել ցանկացողները ոչ թէ միայն երաժշտական կոնցերտները, այլ առհասարակ կրթութեան և զարգացած անձերն էին, երաժշտութիւնը սկսեց դառնալ ընդհանուր կրթութեան միջոց: Այդ է պատճառը անշուշտ, որ այն դասակարգերի մէջ, որոնք իրենց հասարակաց դիրքով աւելի պատրաստ պիտի լինէին կրթութեան արժէքը հասկանալու, երաժշտութիւնը տարածուեց մինչև այն աստիճանի, որ նա դառաւ դասային ընդհանուր կարիք, նախ ամենաբարձր դասակարգի ընտանիքների մէջ, իսկ յետոյ նաև միջին դասի մէջ:

Դասային պահանջը կարող է դառնալ ընդհանուր անհրաժեշտ քաղաքակրթական պահանջ ամբողջ ազգի, ամբողջ համայնքի համար: Դորան կարող է ամենից լաւ օրինակը լինել պարտաւորիչ տարրական ուսումը, որը այժմ մտցրուած է Գերմանիայում, Ջուրիցերիայում, Ֆրանսիայում: Պէտք է իմանալ, երբ է շինվում մի բան պարտաւորացուցիչ և այն՝ անխտիր ամենքի համար, և՛ հարուստի և՛ աղքատի, և՛ բարձր և՛ ստոր դասակարգերի համար. այդ անվում է միայն այն ժամանակ, երբ ընդհանրութիւնը համոզուած է, որ առանց այն բանի, որը ուզում են պարտաւորացուցիչ շինել, համայնքի, այդ հասարակութեան, այդ տէրութեան յառաջագիմութիւնը անկարելի է և կամ աւելի դժուար, աւելի մեծ զոհաբերութիւն պահանջող, քան այն զոհաբերութիւնը, որը ընդհանրութիւնը պէտք է անէ ենթադրուած գործը

պարտաւորիչ շինելու համար: Իսկ յառաջագիմութեան համար ամեն մի առողջ հասարակութիւն կամ տէրութիւն պատրաստ է զոհողութիւն անել, երբ ընդհանուր կարծիք է կազմվում, որ առանց դորան՝ տէրութեան, ազգային անկախութեան նոյն իսկ գոյութիւնը վտանգի մէջ դրած և կասկածաւոր դարձրած կը լինէ:

Ամփոփենք այժմ պահանջների կամ կարիքների մասին մեր բոլոր ասածները: Մարդու բոլոր կարիքները կարելի է բաժանել երկու կարգի. ֆիզիոլոգիական կարիքներ-դոքա կենդանութիւնը շարունակելու ցանկութիւնից բխած կարիքներն են. և քաղաքակրթական, որոնց արծարծողը ոչ թէ բնութիւնն է, այլ այն աստիճանը, որի վերայ կանգնած է մարդս իւր զարգացման և յառաջագիմութեան ընթացքում: Եւ որքան մի ընդհանրութիւն, մի ազգութիւն առաջացած է, նոյնքան նորա անդամները կազմող անհատների քաղաքակրթական կարիքները աւելի բազմաթիւ են, քան բուն բնական կամ ֆիզիոլոգիական կարիքները: Բայց քաղաքակրթական կարիքները հասարակութեան բոլոր անդամների համար միևնոյն չափսի չեն: Նոցանից մի քանիսները կազմում են այդ համայնքի կարիքների minimum'ը, այսինքըն ամենապակաս չափսը (այդ չափսն է մանաւանդ, որով կարելի է չափել մի ազգի զարգացման աստիճանը): Կան նաև քաղաքակրթական կարիքներ, որոնք յատուկ են այս կամ այն դասակարգի անձերին— դոքա դասային կարիքներն են: Որքան մի դասակարգ աւելի զարգացած է և քաղաքականապէս աւելի ոյժեղ, նոյնքան ևս նորա դասային կարիքները աւելի ընդարձակ են:— Դասային կարիքները, վերջապէս, կարող են ժամանակի ընթացքում ընդհանրանալ մինչև այն աստիճանի, որ նոքա կարող են մտնել կարիքների minimum'ի շրջանակի մէջ:—



Այս հայեացքից յետոյ, կարիքների չափսի մասին, վերադառնանք կրկին այն հարցին, որը մենք առաջ դրել էինք, թէ արդեօք մի յայտնի ժամանակում մի որոշ երկիր ամենաշատը զօրքան բնակիչներ կարող է ունենալ: Դուք յիշում էք, Տիկիները և Պարոններ, որ այն հարցին ես այնպէս պատասխանեցի, թէ այդ կախուած է մի կողմից նորանից, թէ մարդու կենդանութիւնը պահպանելու համար զօրքան չափով նիւթեր են հարկաւոր. իսկ միւս կողմից, թէ այդ երկիրը իւր բոլոր ունեցած ոյժերով զօրքան քանակութեամբ այդպիսի նիւթեր կարող է տալ: Օրինակ վերցնելով Երեւանեան նահանգը, մեր ենթադրած թուերի համաձայն դուրս բերինք, որ նա կարող է երկու միլիօն բնակիչ ունենալ. իսկ այժմ, եթէ հարցը այսպէս դնենք, թէ արդեօք, Երեւանեան նահանգի այժմեան արդիւնաբերական հաստատութեան, զօրքան բնակիչներ, ոչ թէ կարող է, այլ ցանկութեամբ է որ նա ունենայ, պատասխանը պէտք է փոխուի: Չէ թէ քաղաքակրթութիւնը հասարակութիւնների նպատակն է և չէ թէ հասարակութիւնը պիտի աշխատէ պահպանել նախ այն, ինչ նորոս պատմական զարգացումը տուել է նորան և չէ թէ, ուրեմն, մի երկիր իւր բոլոր ունեցած ոյժերը չ'պիտի սպառէ միայն կեանքը պահպանելու համար: Ակներև է, որ մի այդպիսի երկրին ցանկալի է ունենալ աւելի սահմանափակ թուով, բայց դուրս փոխարէն աւելի պահանջող, աւելի բարձր աստիճանի վերայ կանգնած բնակիչներ և ևս աւելի սակաւ, եթէ այդ երկիրը չը պիտի բաւականանայ միայն ձեռք բերածով, այլ ցանկանայ քաղաքակրթութեան շաւղի վերայ մի քայլ ևս անել:

Գուցէ Ձեր մէջ արդէն հարց ծագած լինի, թէ արդեօք չէ կարելի մի որ և իցէ, բայց շօշափելի կեր-

պով չափել կարիքների մեծութիւնը: Ես կը պատասխանեմ, որ այդ կարելի է և այդ այն պատճառով, որ կարիքին համապատասխանում է այն միտքը որը մարդըս պէտք է անէ կարիքը լցուցանելու համար. իսկ միտքը մեծութիւն ունէ, որը կարելի է չափել փողով: Եւ արդարև, մտնելու համար հարկաւոր է վաստակել, ուրեմն իմանալով մի երկրի բոլոր անհատների անձնական վաստակը և բաժանելով այդ գումարը բնակիչների թւի վերայ, մենք կ'իմանանք մօտաւորապէս ժողովուրդի մտնելու կարողութեան չափսը. իսկ մտնելու չափսը մեզ մի գաղափար կը տայ այդ ժողովուրդի միջին կարիքի մեծութեան վերայ: Բայց այդ հաշիւը անհնարին չէ անել գոնէ քաղաքակրթութեամբ երկիրների նկատմամբ, որոնց բնակիչների թիւը մեզ յայտնի է, իսկ միւս կէտերի վերայ բաւականաչափ հետազօտութիւններ կան արած: Որպէս զի մենք կարողանալինք մեր ցանկացած խնդիրների համար հետևանքներ դուրս բերել, ես կը վերցնեմ որպէս օրինակ, Ֆրանսիան: Այդ երկիրը՝ որպէս 1881 թուականի վիճակագրութիւնը ցոյց տուեց, լիցեալ թւին ունէր 37 միլիօն բնակիչ: Մենք գիտենք միևնոյն ժամանակ, որ Ֆրանսիական ազգաբնակչութեան մօտաւորապէս կէսը երկրագործ, գիւղացի բնակիչներ են. իսկ մնացած ազգաբնակչութեան մեծ մասը գործարանական և արհեստանոցների բանւորներ են և կամ դոցա ընտանիքներին պատկանողներ: Արդ, ես կարծում եմ, որ մի Ֆրանսիական բանւոր, միջին թուով, ստանում է օրական վարձ ոչ շատ պակաս, քան 2 ֆրանկ 80 սանտիմ, եթէ մէկը միւսի վերայ հաշուելու լինինք և նոցա, որոնք ստանում են 3, 4, 5, 6—10 և աւելի ֆրանկ և նոցա, որոնք երեք ֆրանկից աւելի քիչ են ստանում: Մենք շուտով կ'բացատրենք, թէ ինչու բան-



4100 94



ւորի վարձը մենք մի փոքր աւելի բարձր ենք հաշվում: Ընդունելով, որ այն 2 ֆրանկ 80 սանտիմ ստացողը չորս անձի համար է աշխատում (ինքը, կինը և երկու երեխաներ), կ'տեսնենք, որ շունչին ընկնում է 70 սանտիմ օրեկան վաստակ: Նոյն չափ կարող է վաստակել և երկրրագործ ազգաբնակիւթիւնը: Բայց բացի գիւղացիներից և բանւորներից կան նաև գործարանատէրեր, զինւորականներ, գրողներ, տօկոսով ապրողներ, տերունական ծառայողներ և այլն, որոնց վաստակը վերը չի շածից շատ բարձր են. միայն թէ 'ի հարկէ, այդպիսիների թիւը համեմատապէս սահմանափակ լինելով, ընդհանրութեան համար ներկայացրած օրական վաստակի մեծութիւնը շատ չեն կարող փոփոխել և ահա ինչու, բանւորի օրավարձը հաշուելիս, իրականից մի քիչ աւել հաշուեցի: Օրեկան 70 սանտիմ մարդագլուխ, 37 միլիօն բնակիչների համար, այդ կ'անէր 2 միլիօն 900,000 ֆրանկ օրեկան և կամ, 360-ի վրայ բազմապատկած, մօտ 9 միլիարդ տարեկան: Այդպիսով բոլոր ֆրանսիացիների տարեկան վաստակը, միսիւր միասին առած, հաշուեցինք մօտ 9 միլիարդի: Բայց կայ արդեօք մի որ և իցէ միջոց մեր այս հաշիւը ստուգելու: Այո՛, կայ և այդ միջոցը այն է, որ մենք մօտաւորապէս գիտենք, թէ արդեօք Ֆրանսիայի բոլոր շարժական և անշարժ կայքի արժողութիւնը որքան է՝ որովհետև որտեղից ֆրանսիացիք պէտք է տարեկան 9 միլիարդ աշխատէին. 'ի հարկէ իրանց շարժական և անշարժ կայքերից: Արդ ֆրանսիացի այժմեան ամենահեղինակաւոր տնտեսագէտները կարծում են, որ վրիպած չեն լինի, եթէ ընդունեն Ֆրանսիայի բոլոր շարժական և անշարժ կայքերի արժողութիւնը 150—200 միլիարդ ֆրանկ: Այդ գումարի տարեկան արդիւնքը եթէ 5% հաշուելու լինինք, կ'ստա-

նանք  $7\frac{1}{2}$ —10 միլիարդ տարեկան, այսինքն միջին թւով մօտ նոյն գումարը, ինչ մենք այլ հիմունքների վերայ ընդունել էինք, որպէս բոլոր ֆրանսիացիների տարեկան եկամուտը:

Ընդունելով, որ մեր թւերը մօտաւորապէս ճիշտ են, հետևում է, որ Ֆրանսիան, իւր այժմեան քաղաքակրթութիւնը պահպանելու համար, տարեկան պակասը պիտի 9 միլիարդ արդիւնք ստանայ, որպէս զի կարողանայ իւր 37 միլիօն բնակիչները այժմեան դրութեան մէջ պահել: Բայց ևս առաւել առաջ դնալու համար— և դա մի լոկ ցանկութիւն չէ, այլ անհրաժեշտութիւն գոյութեան համար—այդ երկիրը ստիպուած է տարեկան արդիւնքը միշտ աւելացնել:

Մինչ այժմ, Տիկիններ և Պարոններ, մենք տեսանք այն կապը, որ կայ անհատական միջին կարիքների չափսի, երկրի արդիւնաբերութեան, մեծութեան և ազգաբնակիչների թւի մէջ: Սակայն մի երկրի կարիքների չափսը ոչ թէ միայն ազդում է բնակիչների թւի վերայ, այլ նա ազդում է ազգաբնակչութեան աճման աստիճանի վրայ: Թէ ինչու. այդ դժուար չէ մի երկու խօսքով բացատրել: Եւ արդարեւ, ինչիցն է առաջ դալիս մի երկրի բնակիչների թւի աճումը: Նորանից և միայն նորանից, որ այդ երկրում մահացութիւնը աւելի նուազ է, քան ծննդաբերութիւնը: Ուրեմն, եթէ անհատական կարիքների չափսը աճման մէջ դեր է խաղում, այդ կարող է պատահել, եթէ նա ազդում լինի կամ մահացութեան և կամ ծնունդների թւի վերայ: Մենք այս ըուպէին կ'տեսնենք, որ նա ազդում է ծնունդների յաճախման վերայ, միայն թէ այդ ազդեցութիւնը նաւ անում է ոչ ուղղակի, այլ անուղղակի կերպով, այն է՝ պսակների թւի վերայ ազդելով:



Բացատրութեան կարօտ չը պիտի լինէր, որ Տիեռնայն  
Ժողովարդի հէջ ծնունդների թիւը կախում ունէ  
պսակների յաճախումից: Եթէ հարիւր պսակներից  
տասը տարուայ ընթացքում ծնունդիս լինին 500 երե-  
խաներ, նոյն ժամանակամիջոցում երկու հարիւր պսակ-  
ներից կ'ծնուեն աւելի քան 500 և գուցէ ուղիղ երկու  
անգամ աւելի, ուրեմն 1000 երեխաներ: Կարճ բացատը-  
րեմ, թէ ինչու ես սուանձին կերպով շեշտեցի Տիեռնայն  
Ժողովարդի հէջ բառերը: Այդ այն պատճառով եղաւ,  
որ ազգ ազգի և ցեղ ցեղի մէջ երբեմն մեծ զանազա-  
նութիւն կայ մարդու և կանանց բերրութեան մէջ.  
այսինքն պատահում է, որ մի երկրում, պսակներ նոյն-  
քան և գուցէ աւելի յաճախ են կատարվում, քան  
մի ուրիշ երկրում, բայց ծնունդներ լինում են այն-  
տեղ աւելի սակաւ, քան թէ միւսում. յարել այժմ դորա  
մասին աւելորդ է, քանի որ այս դասախօսութեան վեր-  
ջերքում մենք թւանշաններ պիտի բերենք այդ բոլոր  
խնդիրների վերաբերեալ: Բայց երբ խօսքը միւսնոյն ազգի,  
միւսնոյն հասարակութեան վերայ է, մեր վերը ասածը  
մնում է ճիշտ և այդ պատճառով կարող ենք շարունակել:

Ինչպէս է ազդում մի ժողովուրդի կարիքների չափ-  
սը պսակների յաճախման աստիճանի վրայ: Զապա-  
լան Կեյպով: Նկատեցէք, որ ամեն մարդու բնաւորութեան  
յատուկ է գոնէ իւր դասի մէջ մնալ և վայելել այն  
բոլորը, ինչ հասարակութիւնը յատկացնում է այդ դա-  
սին: Եթէ բանւորը չէ ձգտում դէպի, դիցուք, վաճա-  
ռականների կենցաղավարութեան եղանակը, նա գոնէ  
ձգտում է իւր դրութեամբ այնքան բարձրանալ, որքան  
բանւորական հանգամանքները այդ թոյլ են տալիս  
և ըստ այնմ՝ ապահովել իւր կեանքը, նոյն դասին  
յատուկ բոլոր կարիքները լցուցանելու կարելիութիւնը

ստեղծելով: Նոյն տեսակ մտածում է ամեն ուրիշ դասա-  
կարգի անհատը, փոքրից սկսած մինչ ամենամեծը:  
Այդ զգացմունքը ընդհանուր լինելով, թէպէտ մի երկրի  
բոլոր բնակիչները իրար խօսք խօսքի չեն տալիս այս-  
քան կամ այնքան թւով պսակուել, բայց բոլորի միտեսակ  
վարմունքից առաջանում է ձգտումն, պսակներ միայն այն-  
քան կատարել, որքան հարկաւոր է, որ նոցանից ծնած նոր-  
շունչերը, բաժին պահանջելով երկրի այժմեան հարստու-  
թիւնից, իւրաքանչիւրի բաժինը չ'նուազացնէր և չը  
ստիպէր հասարակութեան անդամներին իրենց կարիք-  
ները աւելի պակաս կերպով բաւականացնել. քան այդ  
առաջ կարելի էր: Ի հարկ է, այդ նպատակին լիապէս  
հասած լինելու և ոչ մի ազգ աշխարհիս երեսին չէ կա-  
րող պարծենալ: Մարդուս բնութիւնից տուած հակում-  
ները շատ են բուռն, որպէս զի խելքի հաշիւնե-  
րով կարենայ մարդ նոցա մի խիստ օրէնքի ենթար-  
կել. բայց եթէ մարդս իւր բազդի լիակատար տէրը  
չէ, այդ հանգամանքը դեռ մեզ զինաթափ չէ անում  
մարտնչելու մեր սեպհական խելքով և աշխատել դէմ  
առնել լոկ բնութեան ձայնին հնազանդող տարրերի  
աւերիչ հոսանքին: Նոր և բազմաթիւ ծնունդներից պատ-  
ճառած ազգաբնակչութեան վերը բացատրած չափսից  
դուրս աճելու դէմ միակ միջոցը պսակների յաճախ-  
ման նուազացնելը չէ միայն. հասարակութիւնը նոյն  
նպատակին հասնելու համար դիմում է մի այլ մեծ մի-  
ջոցի և այդ միջոցը՝ երկրի հարստութեան օր ըստ օրէ  
և տարէ ցտարի աճեցնելը, բարձրացնելն է, որով և ապա-  
հովացնվում է նոր աշխարհք եկածների կեանքը: Ահա ինչու  
ոչ թէ միայն արդիւնաբերելը, այլ և արդիւնաբերութեան  
աստիճանապէս աճեցնելը մարդկային յառաջագիմութեան  
համար մի անհրաժեշտութիւն է և նոյնքան ուժեղ



անհրաժեշտութիւն, որպէս այս կամ այն բնական օրէնք:

Մենք զեռ կը վերադառնանք այս հարցին. միայն այստեղ ի դէպս է հարցնել, թէ արդեօք բնութիւնը ինքը սահմաններ չէ դնում արդիւնաբերութեան և մասնաւորապէս ապրուստի միջոցների աճման: Այս հարցը թէօրեական տեսակէտից մեծ կարևորութիւն ունէ, որովհետև եթէ ապրուստի միջոցների աճեցնելը միայն մարդու ջանքից կախուած լինէր, այդ ջանքը գործըրած հասարակութիւնը ազգաբնակչութեան որևէ աստիճանի աճելուց, բնաւ չ'պիտի քաշուէր, չ'պիտի նեղանար, չ'պիտի վախենար: Արդ, արդեօք այդ այդպէս է, արդեօք ազգաբնակչութեան աճումը թշնամի չունէ՞ նոյն իսկ բնութեան մէջ:

Մեր դրած հարցը կրում է քաղաքատնտեսութեան մէջ Մալթուսի ընդհանուր: Դա՛ այդ անգլիացի համարձակ մտածող քաղաքատնտես քահանան՝ Մալթուսն էր, որի անունով կնքուած է այդ ուսումը, և որի մեկնութիւնով այժմ պիտի զբաղուենք:

Տեսնելով այն սարսափելի տեսարանը, որը ներկայացնում է մարդկային օրարածների բազմաթիւ մահացութիւնը, մանաւանդ ստորին դասակարգի մէջ, Մալթուսը ուզեց թէօրիապէս իմանալ դորա պատճառը: Խնդիրը լուծելու համար, նա նախ աշխատեց հարցը այնպէս դնել, որ մատչելի լինի գիտնական ճիշտ հետազոտութեան: Մալթուսը առաջարկեց ինքն իրան այս հարցը նախ, թէ արդեօք ինչ քանակութեամբ կարող են մարդիկ բազմանալ, եթէ ապրուստի միջոցները աճէին ըստ հարկաւորութեան, որ նոյնն է ասել, եթէ ապրուստի հոգսեր բնաւ չ'լինէին: Մալթուսը նկատեց, որ եթէ վատ ապրուստը և կամ ապրուստի չ'գոյութիւնը շատերին գերեզման է տանում,

ստիպում է մարդկերանց զսպողութեան և այլն, ուրեմն, եթէ ենթադրենք որ ապրուստի բնաւ հոգս չ'լինէր, մարդիկ կ'ապակուէին, որպէս բնութիւնը նոցա հրամայում է և կ'ուսենային երեխաներ, որոնք գուցէ վաղօրօք չէին մեռնի: Արդ, հարցնում է Մալթուսը, այդպիսի անհոգ դրութեան մէջ, մարդիկ ինչպէս կ'աճէին: Այդ առաջին հարցն է: Երկրորդ հարցը, որ Մալթուսը տալիս է իրան՝ խնդիրը լուծելու համար, այդ այս է, թէ արդեօք մարդու սնունդ տուող միջոցները ինչ արագութեամբ են աճում: Թէ ինչ հետեանքներ է դուրս բերում Մալթուսը այդ հարցերի պատասխաններից, այդ մենք զեռ ժամանակ կ'ուսենանք իմանալու: Ինչ մեզ այժմ հետաքրքրում է, այդ այն է, թէ ինչ պատասխաններ է տալիս Մալթուսը իւր դրած հարցերին: Ծանօթանանք նախ առաջին հետ: Առաջինը այն էր, որպէս լիշում էք, թէ ինչ արագութեամբ կարող է աճել մարդիկ, որ նոյնն է ասել, թէ մարդկերանց աճման ֆիզիոլոգիական կարելիութիւնը որքան է:

Մալթուսը այդ հարցը լուծելու համար, վերցնում է մի զոյգ՝ մի մարդ և մի կին և շարունակում է մտածել այսպէս. այս մի զոյգից թող ծնունեն ընդամենը 6 երեխայ, 3 աղջիկ և 3 տղայ. 25 տարուայ ընթացքում սոքա կը կազմեն 3 զոյգ, որոնցից իւրաքանչիւրը կ'ծնէ 6, ուրեմն երեքը միասին՝ 18 երեխայ, որոնցից իննը աղջիկ, իննը տղայ: Կրկին 25 տարուայ լետոյ, սոքա կ'կազմեն 9 զոյգ, որոնցից իւրաքանչիւրը 3 տղայ և 3 աղջիկ բերելով, բոլորը միասին 27 տղայ և 27 աղջիկ կ'ունենան: Նոյն տեսակ մտածելով, մենք կը գրանենք, որ սոքա 25 տարուայ լետ — 27 զոյգ կը կազմեն և կ'ունենան 162 երեխայ, 81-ը աղջիկ, 81-ը տղայ և այլն: Այժմ տեսնենք թէ ինչ ստացանք:



|                                           |    |                       |
|-------------------------------------------|----|-----------------------|
| Սկզբում մենք ունեինք ընդամենը . . .       | 1  | գոյգ                  |
| 25 տարուայ ընթացքում մի գոյգը դառան . . . | 3  | գոյգ                  |
| 25 տարուայ ընթաց. երեք գոյգը դառան . . .  | 9  | գոյգ                  |
| 25 տարուայ ընթաց. իննը գոյգը դառան . . .  | 27 | գոյգ                  |
| 25 տարուայ ընթաց. 27 գոյգը դառան . . .    | 81 | գոյգ                  |
| 25 . . . . .                              | 81 | գոյգը դառան . . . 243 |
| և այլն:                                   |    |                       |

Նկատելու արժանի բանը այս թվանշաններում այն հանգամանքն է, որ իւրաքանչիւր քսան և հինգ տարիների ընթացքում մենք ստանում ենք 3 «նգա» աւելի գոյգեր, քան առաջ: Ասում եմ էրէ՛ անգամ, բայց այդ երեքը այլ հանգամանքներում կարող է և չորս և հինգ լինել, նայած մի ազգի, մի ցեղի ծննդական բերրութեան. եթէ Մալթուսը ամեն գոյգից ծնուածների թիւը 6 է ընդունում, որոնցից յետոյ պէտք է կազմուեն 3 գոյգ, այդ միայն հաւանականութեան մօտիկ մնալու համար է նա արած: Գործը այստեղ «երեք» բառի մէջ չէ, այլ «անգամ» բառի մէջ, որը բազմապատկութիւն է ցոյց տալիս:

Արդ, թւերի այնպիսի մի շարք, որպէս վերը բերածը (1, 3, 9, 27, 81 և այլն), որտեղ իւրաքանչիւր թիւը ստացվում է բազմապատկութեամբ նախորդ թւի մի բոլորի համար ընդհանուր բազմապատկիչ թւի հետ (այս հանգամանքում այդ ընդհանուր բազմապատկիչը 3 թիւն է), թուաբանութեան մէջ կրում է գէօմետրիական պրօգրեսսիայի կամ գէօմետրիական աճման անունը: Այս շարքի մէջ՝ 1, 3, 9, 27, 81, 243 . . . որտեղից ստացանք 3-ը: Մէկը բազմապատկելով 3-ի վրայ: Որտեղից ոտացանք 9-ը: Երեքը բազմապատկելով կրկին նայն 3-ի վրայ. իսկ 27-ը ստացանք, բազմապատկելով 9-ը

նոյն 3-ի վրայ և այլն: Ահա ինչու Մալթուսը, հաստատած լինելով, որ 1 գոյգից 3, 3-ից—9, 9-ից—27 գոյգեր են առաջանում, ասաց, որ մարդկային ցեղի աճելութիւնը, ֆիզիօլօգիայէս, կարող է գէօմետրիական պրօգրեսսիայով կատարուել:

Բայց արդեօք մարդկային ցեղը իրօք գէօմետրիական պրօգրեսսիայով է աճում: Դորան բացասելու համար, երկար մտածելու տեղիք չ'կայ: Զեղնից իւրաքանչիւրը, Տիկիները, և Պարոնները, կարող է իրան այս գուարճութիւնը ներել և մատիտը թղթին բռնած, հաշուել, վերը յիշած եղանակով, թէ քանի տարուայ մէջ կարելի է հասնել մի միլիօնի, հարիւր միլիօնի, հազար միլիօնի (միլիարդ) և հազարաւոր միլիարդ գոյգերի: Դուք կ'տեսնէք, որ հինգ հարիւր տարում այդ մի գոյգը կ'արտադրէ 1 միլիարդ 768 հազար 219 գոյգերից աւելի. իսկ հազար տարում այդ ահագին գումարը բազմապատկած իրան վրայ, որ կ'անէ աւելի քան 312 հազար միլիարդ (312,670,472,600,000): Բայց այս ըոպէին մեր երկրագունտի բոլոր բնակիչների թիւը, չ'նայած մարդկային ցեղի ով գիտէ քանի քանի հազարաւոր տարիների գոյութեան, ստատիստիկական մօտաւորապէս ճիշտ տեղեկութիւնների համեմատ, հասնում է մինչ ոչ աւելի քան մի միլիարդ երկու հարիւր միլիօն հոգու: Ի՞նչն է պատճառը բնակիչների այդ համեմատական սակաւութեան: Մալթուսը դորան պատասխանում է ապրուստի միջոցների սակաւութեան պատճառը սուաջ բերելով: Նա ուզեց հաստատել, որ ապրուստի միջոցները, բնական պատճառներով, աւելի նուազ աճման են ընդունակ, քան մարդկային ցեղը: Ինչպէ՞ս:

Ապրուստի միջոցներով Մալթուսը հասկանում է միայն այն, ինչ մարդուս կենդանութիւնը ապահովում



է. ուրեմն միայն այն, ինչ մարդուս, բնական կամ ֆիզիոլոգիական անուանած կարիքները, պիտի բա-  
լականացնէին. կարճ ասած, Մալթուսը հասկանում է  
այն խօսքով միայն մարդուս սնունդ տալու միջոցները,  
կերակրելէն: Բայց որովհետեւ կերակրելէնների ամե-  
նամեծ մասը կամ ուղղակի բուսեղէններ են և կամ  
այնպիսի նիւթեր, որպէս միսը, որոնք առանց բոյսերի  
օգնութեան չեն կարող ստացուել (չէ թէ անասուննե-  
րին պէտք է բոյսով կերակրել), ուստի, հաստատելու  
համար իւր ասածը, Մալթուսը աշխատում է ապացու-  
ցանել, որ բուսեղէնները չեն կարող այն արագութեամբ ա-  
ճել, որպէս մարդիկ: Իսկապէս, Մալթուսը այդ չէ ապացու-  
ցանում, այլ միայն պնդում է, որ բուսեղէնները հակումն  
ունին արիֆմետիկական պրօգրեսսիայով աճել: Արիֆ-  
մետիկական պրօգրեսսիա, ինչպէս Ձեզ լայտնի է, կոչ-  
վում է թւերի այնպիսի մի շարք, որտեղ իւրաքանչիւր  
թիւը ստացվում է նախորդ թւից, սորան ոչ թէ բազ-  
մապատկելով, այլ գումարելով մի բոլորի համար ընդ-  
հանուր գումարիչ թւի հետ: Օրինակ, ենթադրենք թէ  
այդ ընդհանուր գումարիչ թիւը 3 թիւն է. այն ժամանակ  
մենք կ'ստանանք հետեւեալ շարքը՝ 1, 4 (1+3), 7 (4+3),  
10 (7+3), 13 (10+3), 16 (13+3), 19 (16+3) և  
այսպէս շարունակ: Ուրեմն ասում է Մալթուսը, մինչ  
դեռ մարդիկ հակումն ունեն բազմանալ գէօմետրիա-  
կան պրօգրեսսիայով, ապրուստի միջոցները հակումն ու-  
նեն բազմանալ արիֆմետիկական պրօգրեսսիայով, այսինքն  
մինչ դեռ մարդիկ կ'բազմանային հետեւեալ եղանակով՝  
1, 3, 9, 27, 81, 243 . . . , ապրուստի միջոցները կ'բազ-  
մանային դորանից աւելի թույլ, այն է այս կերպով՝ 1,  
4, 7, 10, 13, 16, . . . ուրեմն, մինչդեռ մարդկային  
ցեղի մի զուգը կաճէր մինչ 243 զուգի, բոյսի մի հատը

նոյն ժամանակամիջոցում կաճեցնէր միայն 16 հատ:

Ես ասացի, որ Մալթուսը իսկապէս միայն պնդում  
է առանց հաստատելու, իբր ապրուստի միջոցները ար-  
իֆմետիկական պրօգրեսսիայով են բազմանում: Ինչո՞ւ  
բոյսերը չեն կարող նոյն գէօմետրիական պրօգրեսսիայով  
աճել, որպէս մարդկային ցեղը:

Բայց չ'նայած Մալթուսի ուսման այդ երկրորդ  
մասի թերութեան, չ'նայած նորա այդ կէտի վերաբե-  
րեալ ասածի անճշտութեան, այն միտքը, որը ուզում էր  
Մալթուսը դորանով յայտնել, կատարելապէս ճիշտ է:  
Ի նկատի առէք, Տիկիւններ և Պարոններ, որ եթէ մին-  
չև անգամ բոյսերը գէօմետրիական պրօգրեսսիայով ա-  
ճելու հակումն կամ ոյժ ունենան, արդէն այն հանգա-  
մանքը, որ նոքա թէ ուղղակի և թէ անասունների  
մսի ձևով մարդու կերակուրի են ծառայում, այն հան-  
գամանքը ուրեմն, որ նոքա անդադար փչացվում են,  
պէտք է խանգարէր նոցա գէօմետրիական պրօգրեսսիայով  
աճելուն: Այդ պարզ է: Ենթադենք, ուրեմն թէ բոյսերը  
աճէին ոչ ինչպէս 1, 4, 7, 10, 13 16 . . . , այլ որպէս  
1, 3, 9, 27, 81, 243 . . . , բայց դորա հետ միասին  
գնում է և մարդկային ցեղի աճումը դոյն չափով, այն  
մարդկային ցեղի, որը առանց բոյսերի ապրել չէ կարող:  
Աճեց բոյսը երեքից մինչև իննը և մարդիկ ևս աճեցին  
երեք հոգուց մինչ իննը հոգի, այս իննը մարդիկը, ապ-  
րելու համար, պիտի փչացնեն այն իննը բոյսերի մի մա-  
սը, դիցուք 5 հատը, ուրեմն բոյսերից կ'մնային 4,  
մարդիկ՝ 9: Աճելով գէօմետրիական պրօգրեսսիայով, այն  
4 բոյսերը կ'աճէին մինչ 12 (4×3), մինչ դեռ նոյն  
միջոցում այն իննը մարդիկ կ'աճէին մինչ 27 (9×3):  
Անհաւասարութիւնը ակներև է:

Բայց այդ միակ հանգամանքը չէ, որը հաստատում է



Մալթուսի միտքը: Երբ Մալթուսը իւր այդ թէօրէն հրատարակում էր, իսկ այդ մեզնից մի 85 տարի առաջ էր, տնտեսական գիտութիւնը դեռ պարզ չէր հասկացել մի այլ մեծ իրողութիւն, որը կարող էր Մալթուսին օգնել բուսականութեան սահմանափակ աճման մասին յայտնած իւր միտքը հաստատելու: Մալթուսին յայտնի չէր, որ հողը, մի յայտնի աստիճանից վեր, չէ տալիս այնքան արդիւնք, որքան մարդս այդ հողի վերայ ջանք և աշխատանք է գործադրում: Այդ այն է, ինչ տնտեսագիտութեան մէջ յայտնի է հողի արդիւնաբերութեան նուազման օրէնքի անունով և որի մասին մեր երկրորդ դասախօսութեան մէջ մենք առիթ կունենանք խօսելու:

Տեսնենք այժմ, թէ ինչ հետևացրեց Մալթուսը վերը յիշած հանգամանքներէց: Մի զարհուրելի ճշմարտութիւն: Եթէ մարդիկ աւելի են աճում քան կերակրեղէնները, պարզ է, որ այդ մի բնական անհրաժեշտութիւն է որ կամ մարդիկ իրենց զսպեն երեխաներ աշխարհք բերելու նկատմամբ և կամ անթիւ համարով զոհուեն ապրուստի միջոցների պակասութիւնից:—Ազգերի կեանքի մէջ այդ երկուքն ևս կատարվում են. իսկ եթէ մահերը այն աստիճանի զարհուրելի տեսարան չեն ներկայացնում, որքան պիտի սպասուէր, եթէ մարդիկ գէօմետրիական պրօգրեսսիայով աճէին, այդ նորանիցն է, որ, ինչպէս վերը մի անգամ արդէն նկատեցինք, այդ աճումը իրօք չէ կատարվում յընթացս մի ամբողջ սերունդի. ապրուստի պակասութիւնը իրեն զգալ է տալիս ոչ թէ 20—25 տարիներից յետ, այլ իւրաքանչիւր րոպէ, իւրաքանչիւր օր, այնպէս որ գէօմետրիական պրօգրեսսիայի թւերի շարքում բազմապատկուող թւերը միշտ աւելի փոքրիկ մեծութիւններ են ներկայացնում, քան պիտի լինէին: Որպէս

զի մեր ընդունած օրինակովը խօսենք, 27 զոյգերը պէտք է քսան և հինգ տարուայ ընթացքում դառնային 81 զոյգեր. բայց եթէ ապրուստի միջոցները միայն կամաց կամաց են աճում, չէ թէ այդ պակասութիւնը պիտի զգացուի դեռ նախ քան այն 27-ից իւրաքանչիւր զոյգը կարողանար վեց երեխաներ աշխարհք բերել: Իւրաքանչիւր զոյգից կը մնան 2 կենդանի ուրեմն ոչ թէ 6, այլ գուցէ 5, 4, գուցէ միայն 3, 2 երեխաներ: Խօսք չկայ, որ այդ հանգամանքների մէջ, մինչև որ այն 27 զոյգերը 81 զոյգեր դառնան, պիտի անցնեն ոչ թէ 25, այլ աւելի տարիներ, գուցէ 50, 60, 100, 300 տարիներ:

Հարկ չկայ ասել, որ այն խորհրդածութիւնները որ մենք արինք մի ազգի անհատական կարիքների միջին չափսի մասին, իրանց ոյժը չեն կորցնում Մալթուսի թէօրէի դիմաց: Այս հեղինակը ընդունում է իւր թէօրէի հիմքում այն անհրաժեշտ միջոցները, որոնք հարկաւոր են մարդուս ապրելու. մինչդեռ մենք տեսանք, որ անհրաժեշտ պէտքերը կերակրեղէնները չեն, այլ և այն բոլորը, ինչ մի քաղաքակրթութիւն իւրաքանչիւրի համար անհրաժեշտ և պարտաւորացուցիչ է շինել: Զանազանութիւնը այստեղ ուրեմն միայն կարիքների չափսի մէջն է այսինքն նորա մէջ, թէ ինչ պիտի ընդունել որպէս անհրաժեշտ կարիք: Բայց այդ հանգամանքը ոչնչով չէ փոխում այն մտածողութեան եղանակը, որը մենք տեսանք Մալթուսի թէօրէի մէջ:

Մալթուսի վերը բացատրած թէօրէով մեկնվում են ազգաբնակչութեան վերաբերեալ մի քանի կարևոր հարցեր. դորանով է մեկնվում, թէ ինչու մարդկային ցեղը չէ կարողացել մինչև այժմ և երբեք էլ չը պիտի կարողանայ լքցնել երկրագունդը. դորանով մեզ պարզ է, թէ ինչու մի կոյս և բերրի երկրում, ուր բերքը առատ



է առանց մեծ աշխատանք պահանջելու, ազգաբնակու-  
թիւնը աւելի արագ է աճում, քան Հին երկրներում  
և այլն:

Մի լաւ ապացոյց, որ ուր գոյութեան և ապրու-  
տի պայմանները յաջող են, ազգաբնակութիւնը ևս արագ  
է աճում, կարող է որպէս օրինակ ծառայել Ամերիկայի  
Հիւսիսային Միացեալ Նահանգների անցեալը: Իւր տարածու-  
թեան համար այդ երկիրը ունէ քիչ բնակիչներ, նամանա-  
ւանդ մի հարիւր տարի առաջ: Ահագին տարածութեամբ  
հողեր կային, որոնք սպասում էին միայն մարդուն, որ  
ցոյց տար իրանց արդիւնաբերական արժէքը: Հողը  
մշակելու համար գրեթէ միայն ցանկութիւն էր պա-  
հանջվում և որովհետեւ ժողովուրդը մի վերին աստի-  
ճանի եռանդոտ, հասկացող, աշխատող ժողովուրդ էր,  
այդ ցանկութիւնն ևս պակաս չէր: Ազգաբնակութեան  
աճումը սկզբներում, այսինքն այն դարերում, երբ Եւրո-  
պացիք դեռ նոր էին գաղթել այդ երկիրը, այսինքն 17-եր-  
դարում, պիտի որ զարմանալի արագ կատարուած լինէր:  
Դեռ չ'հաշուած Եւրոպայից նոր գաղթածներին, հաշ-  
վում են, որ նոյն իսկ 18-եր. դարում, Հիւսիսային միացեալ  
Նահանգների ազգաբնակութիւնը 20—25 տարուայ մէջ  
կրկնապատկւում էր: 1780 թւից մինչ 1800 թիւը,  
ուրեմն տասը տարիների ընթացքում, այդ ազգաբնա-  
կութիւնը, ծնունդների գերազանցութեան պատճառով  
մահացութեան վերայ, աւելացաւ 39,9% ուրեմն հա-  
մարեա 40%-ով, որ կ'նշանակէ, եթէ այդ տեսակ  
շարունակուէր, 25 տարիներում ազգաբնակութիւնը կը  
կրկնապատկուէր: Բայց ազգաբնակութիւնը աճելով, կեան-  
քի պայմանները աւելի ու աւելի պիտի դժուարանային,  
գոնէ այս հաստատ է, որ, հետեւեալ տասնեակ տարինե-  
րում, աճումը աստիճանաբար նուազեց. այնպէս որ այդ

աճումը ներկայացրեց 1800 մինչ 1810 թիւը—մի փոքր  
աւել քան 33%, 1810-ից—1820 32%, 1820-ից մինչ  
1830—մօտ 31%, 1830—40—29,6%: Բայց և այս  
վերջին աճման աստիճանով, ազգաբնակութիւնը պիտի  
կրկնապատկուէր 34 տարիներում, որը մեծ և շատ մեծ  
աճումն է:

Ես չեմ կասկածում, որ ամեն քաղաքակիրթ ազգ-  
իւր պատմութեան մէջ ունեցած է ժամանակներ, դա-  
րեր, երբ նա ներկայացրել է նոյն տեսակ մեծ աճում,  
որպէս Ամերիկայի Հիւսիսային միացեալ Նահանգների  
ազգաբնակութիւնը անցեալ երկու դարերում և այս դա-  
րուայ սկիզբներում: Ի հարկ է, այդ դարերը չ'պէտք է  
որոնել մի ազգի զարգացման ամենաբարձր շրջաններում,  
այլ ընդհակառակը պատմութեան այն շրջանների մէջ,  
երբ մի ազգ դեռ լիովին բռնած չէ եղել երկրի ամբող-  
ջութիւնը. երբ այդ ազգը ունեցել է դեռ մշակելու հա-  
մար հողերի մեծ տարածութիւն. այդ դարերը երկիրը  
բնակեցնելու և ազգի կազմակերպուելու դարերն են և ոչ  
այն ժամանակները, երբ նա արդէն հաստատ կերպով  
կազմակերպուած է եղած:—Բայց դառնանք դէպի հարցը:

Մալթուսի ազգաբնակչական օրէնքը իւր ժամանա-  
կին մի ահագին ազմուկ հանեց ամբողջ Եւրոպայում:  
Նորա գիրքը առաջին տիպով լոյս ընծայուեց 1798,  
երկրորդ տիպով 1803 թւին: Այն բանակուիւր, որը  
ծագեց Մալթուսի դէմ, շատ կատաղի էր, նման այն բանա-  
կըռուին, որը բարձրացրեց Դարվինի թէօրէն այս դա-  
րուայ վաթսուհակաթ թւականներին: Եւ զարմանալի այն  
է, որ, եթէ ոչ բանակուիւր ինքը, գոնէ բանակուա-  
կան ոգին շարունակվում է ցայժմ տեւել բոլոր այն հե-  
ղինակների մօտ, որոնք այս կամ այն առիթով ստի-  
պուած են լինում շօշափել այդ հարցը: Այդ բանակը-



ռուի կատաղութեան իսկական պատճառը, սակայն, չը պիտի որոնել այն մի քանի թերութիւնների մէջ, որոնցից արդարեւ զուրկ չէ Մալթուսի թէօրէն և որոնցից ամենագլխաւորը այն պիտի համարել, որ Մալթուսը հակառակ գիտնական ոգու, որը խստապէս պահանջում է ապացոյցներ ասածը հաստատելու համար, իւր թէօրէին ուզեց մի մաթեմատիկական ֆօրմուլի ձև տալ, բայց սխալուեց. և իսկապէս, ինչ հարկ կար ասելու, թէ բոյսերը արիֆմետիկական պրօգրեսսիայով են աճում, քանի որ այդ անապացուցանելի է. մի թէ միայն ականջին զուրեկան լինելու համար, որը կոնտրաստներ է սիրում: Ասելով, որ մարդկային ցեղը գէօմետրիական պրօգրեսսիայով է աճում, իսկ բոյսերը արիֆմետիկական պրօգրեսսիայով, Մալթուսը, ասում եմ, շատ կարելի է որ հետևել է բարեհնչութեան պահանջին, փոխանակ հետևելու ճշտութեան պահանջին: Մալթուսը այդ անելու հարկ չունէր. բաւական էր, որ նա ասէր, թէ բոյսերը գէօմետրիական պրօգրեսսիայով աճել չեն կարող արդէն այն պատճառով, որ նոքա անդադար պիտի փըշացուին մարդկերանց կերակրելու համար:

Բանակռուի բուն պատճառը, ասացի, պիտի այլուր որոնել: Այո՛, գտնուեցան մարդիկ, որոնց թիւը դժբաղտաբար բազմաթիւ էր, որոնք Մալթուսի խօսքերից շօշափուած զգացին իրենց կրօնական զգացմունքների մէջ: Մարդիկ՝ որոնց միտքը անպայման կերպով իշխուած է տիեզերքի ներդաշնակութեան և արարչական բարութեան գաղափարներով, մերժում են հաւատալ, որ մարդուս կեանքը, նորա գոյութիւնը կարող է այնպիսի խիստ, երկաթային օրէնքներով իշխուած լինել, որպէս Մալթուսի թէօրէն այդպիսիներից մինն է ներկայացրնում: Եթէ Մալթուսի այն ինքն ըստ ինքեան պարզ

ուսումը ոյժ ունեցաւ ոչ միայն գիտնականների ուշադրութիւնը ազգաբնակչական երևոյթների վրայ դարձնել, այլ և նոյն իսկ կուսակցունների բաժանելու չափ հասարակութեան խորքը թափանցել, դորա պատճառը այն է, որ Մալթուսի դէմ բացած բանակռիւր ներկայացրնումէ իսկապէս մի էպիգօդ այն տրագիկական կռուից, որի մէջ կարծես յարատեւ գտանվում է հաւատի մէջ ապաստան գտնելու կարօտ մարդկային զգացմունքը՝ բնութեան անհրաժեշտութիւնների դէմ:

Մալթուսի գիրքը, սակայն, ժամանակի ծնունդ և միևնույն ժամանակ մի բողոք էր ժամանակակից սերունդի սխալ գաղափարների դէմ: Այդ առիթով մի տնտեսագէտ նկատում է, որ, երբ Մալթուսը իւր թէօրէն յայտնեց, մի ամբողջ սերունդի ժամանակամիջոցում այնպիսի մտքեր էին իշխում, իբր թէ իսկապէս ծառերը երկնքում անգամ կարող էին բուսնել, միայն թէ, իհարկէ, նոքա պիտի նոր գիտնական մեթօդներով տնկած, մշակուած լինին! Այդ 18-եր. դարուայ վերջերին էր, գիտնական և քաղաքական շարժումների դարեգլուխը: Իրենց համարձակ կռուի մէջ բռնակալութեան և խաւարի դէմ 18-եր դարուայ երկրորդ կեսի մարդիկը, մանաւանդ Փրանսիայում, որը իշխում էր ամբողջ Եւրոպայի կրթուած մարդկութեան, շատ էին հակուած ամեն չարիք վերագրել վատ օրէնքներին, կարծելով որ մարգս, եթէ ուզէ, կարող է ստեղծել մի կատարեալ, ամեն չարիքից ազատ հասարակութիւն: Մալթուսի թէօրէն կարող է մի բողոք համարուիլ այդ չափազանցութիւնների դէմ, ցոյց տալով մի դէպք, որտեղ բնութեան հակառակող ոյժը աւելի զօրեղ է քան մարդկային ցանկութիւնը:

Իսկ է, Մալթուսը, իւր գրքի մի քանի կէտերում, հարկաւոր եղածից խիստ խօսքեր ունէ: Այդ խօսքերից



մինը հետեւեալ կտորն է, որի խստութիւնը Մալթուսի հակառակորդները հեղինակին բնաւ չ'կարողացան ներել: Մի մարդ, ասում է Մալթուսը, որը մի արդէն նուաճուած աշխարհքում է ծնվում և որին ոչ նորա ընտանիքը կարող է կերակրել և ոչ նորա աշխատանքին հասարակութիւնը կարօտութիւն ունէ, այդ մարդը բնաւ իրաւունք չունէ իւր համար պահանջել ապրուստի միջոցների մինչև անգամ ամենաչնչին մասը, և նա իսկապէս աւելորդ է երկրիս երեսին: Բնութեան մեծ ճաշկերոյթին նորա համար ոչ մի սպաս (couvert) չէ դրած: Բնութիւնը հրամայում է նորան կրկին յետ դառնալ և ընդէ չէ կորցնում իւր հրամանին ինքը կատարում տալու:

Այս խիստ խօսքերը վիրաւորեցին հասարակութեան զգացմունքը մինչ այն աստիճանի, որ Մալթուսը, որը դեռ երիտասարդ էր իւր գրքի առաջին հրատարակութեան ժամանակ, իրան ստիպուած տեսաւ, գրքի երկըրորդ տպագրութեան մէջ, վերը բերած կտորը բոլորովին դուրս թողնել:

Որպէս զի մեր հաշիւը վերջացնենք Մալթուսի թէօրէի հետ, աւելցնենք այն դիտողութիւններին, որ մենք արինք այդ թէօրէի բացատրութեան ընթացքում, նաև հետեւեալ նկատողութիւնը: Մինչ այժմ մենք թուլ տուինք, որ մարդկային ցեղը կարող է աճել զէօմետրիական պրոգրեսսիայով: Այդ կարելիութիւնը այն ժամանակ հաւանական կ'լինէր, եթէ ամեն մի մարդկային զոյգ երեխաներ աշխարհք բերէր: Բայց կան նաև չը բերք զոյգեր և անբերութիւնը այնքան սակաւ չէ, որքան շատերը մեզնից գուցէ կարծելու կ'հակուէին: Օեստերլինը (Oesterlen) իւր «բժշկական վիճակագրութեան ձեռնարկ» գրքի մէջ ասում է, որ բոլոր պսակներէ 10—20% անպտուղ են: Փարըը հաշվում է իւր մի

տեղեկագրի մէջ 1851 թւականին, որ 27 միլիօն բնակիչների վերայ, որ այն ժամանակ ունէր Անգլիայի միացեալ թագաւորութիւնը, (բուն Անգլիան, Շոտլանդիան, Իրլանդիան միասին) մի միլիօն անգլաակ ընտանիքներ կային, եթէ ընտանիք հաշուենք նաև այրիացած մարդիկ: Մօրիս Բլօկը, չ'զիտեմ ինչ հիմունքների վերայ, կարծում է, որ հինգ կանանցից մէկին չը բերք կարելի է հաշուել: Ինչ և իցէ այս հանգամանքի նկատի չ'առնելը մի զանցառութիւն է Մալթուսի կողմից, բայց մի զանցառութիւն, որը թէպէտ և կարող է նուազացնել նորա ասածի մաթիմատիկական ճշտութիւնը, բայց ոչ հերքել թէօրէի ընդհանուր գաղափարը:

Մալթուսի թէօրէին, մի ճշմարիտ ընդհանուր ազգաբնակչական թէօրէ լինելու համար, ըստ իս մի բան է պակաս, այն է՝ լիակատարութիւնը: Նա կարօտութիւն ունէ լրացման: Եթէ ես ձեզ հետ, Տիկիններ և Պարոններ, երկար խօսած չ'լինէի անհատական կարիքների մասին, Մալթուսի թէօրէից չէիք դուրս բերի արդեօք այն եզրակացութիւնը, որ, եթէ այսօր, օրինակի համար Փրանսիան, որ այժմ 37 միլիօն բնակիչներ ունէ, 40 միլիօն ունենար, երեք միլիօնը պէտք է անպատճառ մեռնէին: Մալթուսը մոռանում էր լիշել, որ յառաջագէտ ազգերը իրենց կարիքները բազմացնում են, այնպէս որ բոլոր քաղաքակրթուած երկիրները անհամեմատ աւելի քիչ բնակիչներ ունին, քան թէ կ'ունենային եթէ նորա բնակիչները թողնէին բոլոր կուլտուրական պահանջները: Ուրեմն կարող է պատահել, որ մի երկրի հարստութիւն չի աւելանայ, բայց նորա բնակիչների թիւը կը աճէ: Մալթուսի թէօրէի համեմատ այդպիսի բան չէր կարող պատահել, միջդեռ այս դասախօսութեան դեռ



սկզբում բացատրած կարիքների չափսի թէօրէի համեմատ, այդ կարող է պատահել. և մենք կարող ենք միևնոյն ժամանակ աւելացնել, որ այդպիսի հանգամանքում եղած աճումը յետադիմութեան նշան է, որովհետեւ այդ երկրի մարդիկը ստիպուած պիտի լինին աստիճան առ աստիճան պակասցնել իրենց պահանջները մինչև որ կ'հասնին այն դրութեանը, ուր նոքա պիտի բաւականան միայն ապրելու համար ամենաանհրաժեշտ եղածովը: Գորան ամենից լաւ օրինակ կարող է ծառայել Չինաստանը: Ամեն ինչ ցոյց է տալիս, որ չինացիները մի ժամանակ յառաջագէտ ժողովուրդ են եղած և մի քարձր քաղաքակրթութիւն ունեցած: Բայց արդէն վաղուց է և շատ վաղուց, որ նոքա դադարել են յառաջ խաղալուց. յետագնացութիւն իսկապէս չէ նկատուում, բայց նոքա այժմ մնում են այն, ինչ որ նոքա էին դեռ շատ դարեր առաջ: Արդ, մի այդպիսի երկիր, որպէս Չինաստանն է, որի մեծութիւնը քիչ աւել է, քան ամբողջ Եւրոպան միասին (Եւրոպական Ռուսաստանն էլ միասին հաշուած), ունէ, ըստ նորագոյն տրուածներին, առնուազը հարիւր միլիօն աւելի բնակիչներ քան ամբողջ Եւրոպան: Իսկ եթէ հաշուելու լինինք միայն բուն Չինաստանը առանց Մանջուրիայի, Մօնղօլիայի, Տիբեթի և Կօրէյի, կ'տեսնենք, որ այդ երկիրը Եւրոպայի տարածութեան կէսից դեռ շատ պակաս լինելով, ունէ Եւրոպայից դեռ մի 50 միլիօնով աւելի բնակիչներ: Բայց նշանակաւ առարկայ երբէք չէ կարող լինել, որ Չինաստանը դեռ շատ հեռու է նոյն արդիւնաբերական ոյժը ունենալուց, ինչ ունէ նորանից սակաւ բնակեցրած Եւրոպան: Իսկ միւս կողմից, տնտեսական անյառաջադիմութեան դիմաց, Չինաստանի ազգաբնակչութիւնը ոչ միայն չէ նուազում, այլ և աճում է. գոնէ կան նշան-

ներ, որոնցից պիտի աւելի աճելը քան նուազելը եզրակացնել: Չինացին այդպիսով ստիպուած է եղել դարերի ընթացքում նուազեցնել իւր պահանջները և բաւականաւ մի ապրուստով, որը Եւրոպացին, իւր ալժմեան դիրքում, չէ կարող ընդունել: Գորան ապացոյց թող ծառայէ այդ դրութիւնը, որի մէջ են գտնվում Ամերիկա գաղթած չինացի բանւորները համեմատած այն կեանքի հետ, որը վարում են նոցա հետ միասին աշխատող Եւրոպացի և կամ որ նոյնն է, Եւրոպական ցեղերի ամերիկացի բանւորները: Այդ մի հարց է, որը մի քանի տարիներէ ի վեր գրաւել է Ամերիկայի Հիւսիսային Միացեալ Նահանգների ուշադրութիւնը և սպառնում է դառնալ մինչև անգամ մի ընդհանուր հասարակաց և քաղաքական հարց: Գործը նորանումն է, որ այդ երկրի արեւմտեան մասում, մանաւանդ Սան—Ֆրանցիսկօ քաղաքում, չինացի գաղթականները կազմում են մի բաւականի մեծ ազգաբնակչութիւն և նոյն իսկ այդ պատճառով, մեծ մրցութիւն են անում ամերիկացի բանւորների հետ: Բայց այդ մրցութիւնը դեռ տանելի կ'լծէր ամերիկացիներին, եթէ միայն չինացիները, իրենց պահանջների վերին աստիճանի սահմանափակ լինելու պատճառով, առիթ չ'տային օրավարձի պակսելուն: Ամերիկացի կամ Եւրոպացի բանւորը, մեր ալժմեան քաղաքակրթութեան համեմատ, սովորած է մի յայտնի կենցաղավարութեան, որը թոյլ չէ տալիս, որ օրավարձը մի յայտնի աստիճանից վայր իջնէ. այդ պատճառով Եւրոպական բանւորները աշխատում են բարձրացնել օրավարձը, որքան այդ կարելի է: Բայց ահա գալիս է չինացին և խանգարում է նորան իւր այդ նպատակին հասնելու, և ինչո՞ւ. որովհետեւ չինացին շատ չնչին բանով իրան բաւականութիւն է տալիս և իւր աշխատանքը անհա-



մեծատ աւելի աժան է առաջարկում, քան ամերիկացին կամ եւրոպացին: Ահա ինչու Սան-Ֆրանցիսկոյի ամերիկացի բանւորները այս վերջին տարիներում սաստիկ կատաղած էին չինացի համաշխատակիցների դէմ, և վրտանգաւոր համարելով չինացիների բազմաթիւ Ամերիկայում, պահանջում են, որ նոցա մինչև անգամ իսպառ արգելուի Ամերիկա գաղթել, մանաւանդ որ, եթէ չինացիների գաղթականութիւնը մի երկու սերունդ շարունակուի, նոքա կարող են սպառնալ Հիւսիսային Միացեալ Նահանգները չինականացնելու:

Դուք տեսնում էք այժմ, որ տնտեսական յառաջադիմութիւնը ոչ թէ միայն ցանկալի պիտի համարուի, այլ և ամենակարեւոր անհրաժեշտութիւն մի հասարակութեան, մի ազգի, մի պետութեան նոյն իսկ գոյութեան համար, եթէ այդ գոյութիւնը մի որեւիցէ քաղաքակրթական նպատակի պիտի ծառայէ:

Խօսելով ազգաբնակչութեան աճման և նուազման երեւոյթների վերայ և յայտնելով Ձեզ նոցա պատճառների մեկնութիւնները, ես ի նկատի չունիմ սպառել հարցը այն չափով, որքան այդ թերեւ թույլ կ'տար գրականութեան հարստութիւնը այդ առարկայի մասին: Այստեղ տեղը չէ զբաղուել մասնաւոր կէտերով. հետազօտութիւններ կան արած և այն բազմաթիւ, թէ ինչպէս է ազդում պսակների ուրեմն և ծնունդների յաճախման վերայ ցորենի անառատութիւնը, թէ ինչպէս է ազդում նոյն անառատութիւնը մահացութեան պատեհների թւի վերայ. հետազօտութիւններ կան արած և կամ հիմնաւոր կարծիքներ յայտնուած, թէ հողային սեպհականութեան այս կամ այն սիստէմը ինչ ազդեցութիւն է գործում ժողովրդի հեռատեսութեան վերայ պսակների յաճախման նկատմամբ և այլն և այլն: Այդ բոլորը

այնպիսի հարցեր են, որոնք թէպէտ շատ հետաքրքիր ինքնրստինքեան, բայց չեն կարող մտնել մեր այս օրուայ դասախօսութեան շրջանակի մէջ. որովհետեւ ժամանակը սուղ է, իսկ մենք աւելի կարեւոր բաներ ունինք հաղորդելու:

Հարցը այժմ նորանումն է, թէ աճումը կամ նուազումը, որ նոյնն է, թէ պսակների, ծնունդների և մահի պատեհների թիւը իրօք որքան է ալ և ալ երկիրներում: Սոքա արդէն բուն գործնական հարցեր են և վերաբերում են եղելութեան, իրական կեանքին: Դոցա պատասխանները գտնելու համար մենք այլ ևս կարօտութիւն չ'ունինք դիմել թէօրէնների. թէօրէն հարկաւոր է, երբ պահանջվում է ընդհանուր երեւոյթներ առաջացրնող դրութիւններ գտնել և կամ, փիլիսոփայական ոճով ասած, գտնել երեւոյթների մէջ այն, ինչ պատճառն է և այն, ինչ պատճառի հետեանքն է: Առանց թէօրէնների գիտութիւն չէ կարող գոյութիւն ունենալ, որովհետեւ գիտութիւն չէ նշանակում լոկ գիտելիքներ, տեղեկութիւններ, այլ գիտութիւնը՝ գիտելիքների մի ամբողջ սիստէմ է, իսկ սիստէմ չէ կարող ստեղծուիլ առանց իրերը, երեւոյթները իրար հետ շղթակապող մեկնութիւնների: Մինչ այժմ մենք զբաղուեցինք հարցի միայն այդ թէօրէական մասով, ի հարկէ միայն այն չափով, որքան այդ թույլ է տալիս գիտութեան այժմեան աստիճանը, որը պէտքէ խոստովանուել, դեռ հեռու է մեր պահանջներին, ցանկութիւններին լիովին բաւականութիւն տալուց:

Դիմենք ուրեմն իրականութեան և յայտնենք իսկոյն և եթ, որ մեր միակ աղբիւրը և միջոցը ազգաբնակչական հարցերին ճշտօրէն պատասխանելու, վիճակագրութիւնն է, ստատիստիկան է: Վիճակագրութիւնը, այսինքն ամբողջութեան վերաբերեալ և սիստէմատիկա-



պէս հաշուած համահաւասար միութիւնները կամ պատեհները: Այդ բացատրութիւնը արդէն կատարեալ բաւական է հասկանալու համար, որ ազգաբնակչական երևոյթները միայն այն ժամանակ կարելի է ուսումնասիրել, երբ բաւականաչափ ստատիստիկական նիւթեր կան ժողոված: Բայց ստատիստիկական նիւթեր ամեն երկիր չունէ. այդ միայն Եւրոպան և Ամերիկայի մի քանի տէրութիւններն են, ուրեմն միայն քաղաքակրթութեամբ ազգերն են, որոնք տէրութեան կամ համայնքների միջոցով այդ տեսակ նիւթեր են հաւաքում երկրի դրութիւնը ճանաչելու համար: Միայն այդ երկիրների դրութիւնը մենք գիտենք և այդ պատճառով միայն նոցա դրութիւնը կարող ենք Ձեզ յայտնել և ուսումնասիրել շատ թէ քիչ կատարեալ կերպով: Ի հարկէ, որպէս Դուք դեռ կ'տեսնէք, նոցա մասին ունեցած տեղեկութիւնները կարող են լոյս ձգել նաև այլ ազգերի դրութեան վերայ: <sup>1)</sup>

Ի Սկսենք պսակներից. բայց նախքան թւանշաններ առաջ բերենք, վճռենք այս հարցը, թէ արդեօք ինչ պիտի նշանակեն այդ թւանշանները:

Գործը նորանուժը չէ միայն, թէ մի երկրում, մի տարուայ մէջ որքան պսակներ են կատարվում, այլ պէտքէ նաև իմանալ, թէ այդ թիւը ինչ մեծութիւն է ներկայացնում: Թոյլ առէք մի երկու բառով բացատրեմ ասածս: Գիցուք հաշուեցինք, որ մի գիւղում մի

<sup>1)</sup> Ներքեի բացատրութիւնները ամբողջապէս հիմնուած են ստատիստիկական թւանշանների վրայ. ոչ ոք չէ կարող պարծենալ նոցա հեղինակը լինելու, որովհետև ստատիստիկական նիւթեր հաւաքելու համար ոչ մի անհատական ոյժ բաւականութիւն չէ կարող տալ, և նորա հաւաքելը կատարվումէ տէրունական կամ հասարակաց հիմնարկութիւնների կարգադրութիւններով:

տարուայ մէջ 20 պսակներ կատարուեցան: Այդ թիւը «քսան» ինքն ըստ ինքեան մեզ ոչինչ չէ հասկացնում և այդ այն պատճառով, որ եթէ մի հինգ տարիներից լեռնոյն գիւղում 25 պսակներ կատարուեն, մենք դեռ չենք կարող պնդել, պսակները աւելի յաճախ են դառել թէ ընդհակառակը, սակաւել են. որովհետև այդ հինգ տարիների ընթացքում գուցէ այդ գիւղի ազգաբնակչութիւնը այս կամ այն պատճառով կրկնապատկուել կամ երկու անգամ փոքրացել է: Այլ բան է, եթէ համեմատենք պսակների թիւը նոյն տարուայ ազգաբնակչութեան հետ. այն ժամանակ մենք կ'ստանանք զանազան մեծութիւններ և կարող կ'լինէինք մի որևիցէ եզրակացութիւն դուրս բերել, որը օգտաւետ կ'լինէր ժողովրդի դրութիւնը որոշելու համար: Այս բացատրութիւնները թերևս Ձեզնից շատերին աւելորդ թւէին. որովհետև յիշուաւի, դոքա տարրական ճշմարտութիւններ են կազմում բոլոր գիտութիւնների համար: Բայց որպէս զի այլ դիպուածներում ստիպուած չ'լինենք միշտ նոյնը կրկնել, գործածենք այդ զանազան թւերը իրարից որոշելու համար այն տերմինները, այն բառերը, որոնք ընդունված են բոլոր գիտութիւնների մէջ: Այն թիւը, որը լոկ քանակութիւն է ցոյց տալիս, անուանվում են բացարձակ կամ արեւօլուտ մեծութիւն. եթէ մի գիւղում 20 պսակներ են կատարուել, այդ թիւը «քսան» պսակների արեւօլուտ մեծութիւնն է ցոյց տալիս. մինչդեռ այն թիւը, որը յարաբերութիւն է ցոյց տալիս, անուանվում է յարաբերական մեծութիւն. եթէ այն գիւղը, ուր 20 պսակներ են կատարուել, 2000 բնակիչներ ունէր, նշանակում է ամեն մի 1000 բնակիչների վրայ ընկած են 10 պսակներ և կամ հարիւրի վրայ մի պսակ, որ նոյն է թէ պսակները կազմած են եղել այդ գիւղում և այդ տա-



րում 1 պրօցէնտ: Այդ մի պրօցէնտը կազմում է պսակ-  
ների յարաբերական մեծութիւնը: Ուրեմն մեր վերը տա-  
ծի միտքը այն է, որ մեզ հարկաւոր է իմանալ պսակնե-  
րի յարաբերական մեծութիւնը, թէպէտ և, որպէս Դուք  
այն մի օրինակից արդէն համոզուել կարող էք, առանց  
աբսօլուտ մեծութեան՝ յարաբերական մեծութիւնը գրո-  
նել անկարելի է: Փոխանակ ասելու յարաբերական մե-  
ծութիւն, մենք կարող ենք ասել յաճախութիւն: Եթէ  
մի երկրում կատարուած պսակների թիւը մի տարում  
ազգաբնակչութեան 1% է եղած, միւս անգամ 2%, նը-  
շանակում է, թէ այս երկրորդ տարուայ մէջ պսակներ  
երկու անգամ աւելի յաճախ են կատարուած. այդ պարզ է:

Պսակների յաճախութիւնը իմանալու համար, նախ  
պէտք է բաժանել ազգաբնակչութեան թիւը պսակ-  
ների թւի վերայ: Բայց կայ և մի այլ մեթօդ, որը ա-  
ռաջինից աւելի ճիշդ է. այդ մեթօդը կայանում է նո-  
րանում, որ պսակների թիւը համեմատում են ոչ թէ  
ամբողջ ազգաբնակչութեան հետ, այլ միայն պսակուելու  
տարիներում գտնուող ազգաբնակչութեան հետ: Օրինակ  
մի երկիր ունէ մի միլիօն բնակիչ. այդ մի միլիօնից  
գուրս են գալիս այնքան, որքան, մի տարեկանից մինչ  
գիցուք 15 տարեկան երեխաներ կան այդ մի միլիօ-  
նի մէջ: Դիցուք այն ժամանակ այն մի միլիօնից  
մնաց 700,000: Եթէ պսակների թիւը 10,000 էր եղած,  
նշակում է, թէ պսակների թիւը կազմած է պսակուե-  
լու տարիներում գտնուող ազգաբնակչութեան  $\frac{7}{10}$ -ական  
մասը: Դուք գուցէ հարցնէք, թէ այս վերջին մեթօդը  
ինչ առաւելութիւն ունէ առաջինից: Այդ առաւե-  
լութիւնը նկատվում է մանաւանդ այն ժամանակ, երբ  
հարկաւոր է լինում համեմատել այլ և այլ երկիրների  
գրութիւնները պսակների յաճախման նկատմամբ: Բանը

նորանումն է, որ մի երկիր միւսից երբեմն շատ է զանա-  
զանվում երեխաների յարաբերական թւով: Ահա Ձեզ մի  
ապացոյց: Հաշուած է, որ ամեն մի 10,000 հոգու վը-  
րայ Փրանսիայում գալիս են 3,612 մի օրականից մինչ  
20 տարեկան հասակի շունչեր, միջգեւ Պրուսիայում՝  
4,665: Զանազանութիւնը, որպէս տեսնում էք, շատ մեծ  
է: Նշանակում է, թէ Փրանսիայում համեմատապէս ա-  
ւելի շատ թւով պսակուելու տարիներում գտնուող մար-  
դիկ կան, քան թէ Պրուսիայում, այնպէս որ, եթէ և՛  
Փրանսիայում և՛ Պրուսիայում ամեն մի 10,000 բնակիչ-  
ների վրայ դիցուք 100 պսակ գային, առաջին մեթօդով  
հաշուած՝ պսակների յաճախումը այդ երկու երկիր-  
ներում հաւասար կ'լինէր, մինչգեւ, երկրորդ մեթօ-  
դով հաշուած, պէտք է եզրակացնէինք, որ Փրանսիայում  
մարդիկ աւելի սակաւ են պսակվում, քան Պրուսիայում:

Այս ասած, տեսնենք այժմ, ինչ է ասում վիճակագը-  
րութիւնը պսակների յաճախման մասին Եւրոպայի զա-  
նազան երկիրներում: Այս ցուցակը մենք փոխ ենք  
առնում Ֆրանսիական ստատեստիկոս Բերտիլօնի մի աշ-  
խատանքից:

Պսակների թիւը ըստ 1000 անձների

աւելի քան 15 տարեկան հասակի:

| Երկրներ   | Դիտած<br>շրջաններ | Կատարուած<br>պսակներ |
|-----------|-------------------|----------------------|
| Բաւարիա   | 1850—59           | միջին թուով 9. 0     |
| Բելգիա    | 1851—60           | — — 1 0. 6           |
| Շվեդիա    | 1836—65           | — — 1 0. 9           |
| Ֆրանսիա   | 1856—65           | — — 1 1. 0           |
| Նօրվիգիա  | 1851—60           | — — 1 1. 5           |
| Իտալիա    | 1851—60           | — — 1 1. 6           |
| Հոլլանդիա | 1830—59           | — — 1 2. 4           |
| Դանիա     | 1855—59           | — — 1 2. 6           |
| Աւստրիա   | 1856—59           | — — 1 2. 6           |



|          |         |   |   |        |
|----------|---------|---|---|--------|
| Պրուսիա  | 1859—61 | — | — | 1 2. 7 |
| Անգլիա   | 1857—66 | — | — | 1 3. 0 |
| Սաքսոնիա | 1859—61 | — | — | 1 3. 0 |
| Ռենգարիա | 1856—59 | — | — | 1 3. 6 |

Նշանակում է, թէ Բաւարիայում, 1850-ից մինչ 1859 թուականը, միջին թուով տարէնը ամեն մի 1000 անձերի վրայ, 15 տարեկանից վեր, 9 պսակներ էին գալիս, որ կ'անէ  $\frac{9}{10}\%$ , Բելգիայում 10. 6, որ կ'անէ  $\frac{6}{100}\%$ , Ֆրանսիայում 11, որ կ'անէ  $1\frac{1}{10}\%$ , Պրուսիայում  $1\frac{27}{100}\%$ , Ռենգարիայում  $1\frac{36}{100}\%$ :

Անկարելի է, Տիկիներն և Պարոններ, որ այս ցուցակի վերայ նայելիս, Ձեր աչքին զարնած չ'լինէ թւերի այնքան փոքր զանազանութիւնը իրարից: Դուք տեսնում էք, որքան Հաւասար է պսակների յաճախումը արիւնով, ցեղով և քաղաքակրթութեամբ շատ թէ քիչ իրարից տարբեր ազգերի մօտ: Այդ միայն մի երկիր է, ուր պսակների թիւը 1 պրօցէնտից պակաս է, բոլոր միւս յիշուած երկիրներում այդ թւերը կազմում են 1 պրօցէնտից սկսած մինչ մի և երրորդ պրօցէնտ: Ի հարկէ, այդ զանազանութիւնները, որ մենք տեսանք, որքան և փոքր լինին նոքա, նշանաւոր պիտի լինին մեզ համար, որովհետեւ նոքա պատահական չեն, այլ ունին պատճառներ, որոնք, եթէ խորը քննենք, մի առանձին լոյս կ' տարածեն ազգերի հասարակաց կեանքի վերայ:

Պսակների յաճախումը իմանալու համար, որպէս ես Ձեզ առաջ էլ յայտնեցի, կարելի է մի այլ տեսակ ցուցակ շինել. այն է՝ համեմատելով պսակների թիւը ոչ թէ 15 տարեկանից վեր անձերի թւի հետ, այլ ամբողջ ազգաբնակչութեան հետ. և ես աւելցրի, որ այս վերջին եղանակը այնքան նպատակաւարմար չէ, որքան առաջինը. պատճառը Դուք արդէն գիտէք: Չ'նայած դորան, ես կը

բերեմ այստեղ այդ եղանակով դուրս բերած մի ցուցակ, թողնելով յետոյ ասելու, թէ հետաքրքրութեան ինչ կէտ կայ նորանում: Այս ցուցակը մենք փոխ ենք առնում իտալական վիճակագրութեան ղեկավար Բօդիօյի մի աշխատանքից, միայն թէ մենք նորան ներկայացնում ենք այստեղ ամփոփած ձևով:

|              |                                                  |                       |
|--------------|--------------------------------------------------|-----------------------|
| Պսակներ թիւը | 1865 թ. մինչ 1875 թ. տե-<br>000 բնակիչներ չափով. | ղեկութիւնների համեմա- |
| Իրլանդիա     | 5. 1                                             |                       |
| Շվեդիա       | 6. 6                                             |                       |
| Շոտլանդիա    | 7. 2                                             |                       |
| Իտալիա       | 7. 5                                             |                       |
| Բելգիա       | 7. 5                                             |                       |
| Ջուրիցերիա   | 7. 5                                             |                       |
| Ֆրանսիա      | 8. 0                                             |                       |
| Հոլանդիա     | 8. 2                                             |                       |
| Անգլիա       | 8. 4                                             |                       |
| Աւստրիա      | 8. 5                                             |                       |
| Պրուսիա      | 8. 9                                             |                       |
| Բաւարիա      | 9. 3                                             |                       |
| Ռենգարիա     | 10. 4                                            |                       |

Ի՞նչ ենք հասկանում այդ ցուցակից: Այն, որ Եւրոպայում իւրաքանչիւր 1000 բնակիչների վրայ կատարվում են, նայած երկրին, առ նուազը 5. 1 ամենաշատը և 10. 4 պսակներ, եթէ հաշուելու լինենք մի տասը տարիներ մէկը միւսի վրայ:

Եթէ ես այս ցուցակը առաջ բերի, այդ մի նպատակ ունէր. այն է, որ, գիտենալով պսակների թիւը մի երկրում, մօտաւորապէս կարելի է հաշուել այդ երկրի ազգաբնակչութեան թիւը: Ես ՚ի նկատի ունիմ այստեղ, ՚ի հարկէ, հայ ազգին, հայ ժողովուրդին, որի մասին ոչ Ռուսաստանում, ոչ Տաճկաստանում և ոչ Պարսկաստանում ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ կան: Կարելի



է ընդունել, որմեզ մօտ, ուր գործարանական կեանքը դեռ շատ քիչ է զարգացած, իսկ սովորութիւնները դեռ շատ թէ քիչ նահապետական են, պսակների յաճախումը այնքան լինէ, որքան Եւրոպայի ամենից շատ պլասակներ ցոյց տուող երկիրներում: Մենք կարծում ենք, որ մեր հոգեւոր իշխանութիւնը շատ հեշտութեամբ կարող է մեր բոլոր քահանաներից պահանջել որ սոքա ամեն տարի իմացնեն գրաւորապէս հոգեւոր իշխանութեան իրանցից կատարուած պսակների թիւը, հրատարակելով այդ ցուցակներից դուրս բերած ընդհանուր թւանշանները ամեն գիւղի և քաղաքի համար, մենք կարող կ'լինէինք նոցանից դուրս բերել մեզ հետաքրքրող և մեր ազգի համար ամենևին ոչ անտարբեր եզրակացութիւններ: Ինչ խօսք կայ, որ մենք նոյն գիւրութեամբ կարող կ'լինէինք ձեռք բերել բոլոր ծնունդների և մահերի թւերը, որոնք դեռ ևս առաւել նշանաւոր են, քան պսակների թիւը: Աւելցնենք, որ հրահանգներ տալուց առաջ՝ այդ և գորա նման խնդիրների վերաբերեալ, իշխանութիւնները, լինին սոքա մարմնաւոր թէ հոգեւոր, պիտի նախ դիմեն քաղաքատնտես ստատիստիկոսների խորհուրդին: Պէտքէ գիտենալ, թէ ինչ հարցեր և ինչպէս առաջարկել պատասխանելու, պէտք է իմանալ որոշել կարեւորը անկարեւորից:

Պսակների վերաբերեալ կան շատ ուրիշ հարցեր, որոնցով տնտեսագէտները և ստատիստիկոսները վաղուց արդէն զբաղվում են: Մտնել այդ մանրամասնութիւնների մէջ այժմ չենք կարող. մենք կ'բաւականանք միայն նոցա հարեանցօրէն յիշելով: Եւ այսպէս, ուսումնասիրվում է, թէ արդեօք այլ և այլ երկիրներում և կամ միեւնոյն երկրի զանազան դարէշրջաններում որ չափով տղերք աղջիկների հետ են պսակվում, որ չափով տղերք՝ այրի կանանց հետ, այրի մարդիկ՝ այրի կա-

նանց հետ: Այլ հարց՝ հինգ կամ տասը կամ աւելի տարիների ընթացքում միջին թուով քանի պրօցէնտ են կազմում պսակողներ 20 տարեկանից պակաս, 20—30 տարեկան, 30—40, 40—50, 50—60 և 60 տարեկան հասակից վեր: Հետազօտութիւններ են անվում և կամ կան արուած իմանալու համար, թէ այլ և այլ հասակի տղամարդիկ որքան տարբեր հասակի կանանց հետ են պսակվում: Այլ և այլ մեթօդներ են առաջարկուած գրտնելու ծննդական բերրութեան աստիճանները զանազան երկիրներում և կամ նոյն երկրի զանազան դարէշրջաններում: Նմանապէս անտարբեր չէ գիտենալ, թէ մի երկրում պսակվողների թիւը ինչպէս է բաժանվում ամիսների վրայ, որ ամսում ամենից շատ են պսակվում, որ ամիսներում ամենաքիչ: Այս բոլորի մասին Դուք կ'գտնէք բաւականացողիչ տեղեկութիւններ գրեթէ ամեն մի լաւ ստատիստիկական ձեռնարկի մէջ: Այստեղ ես կարող եմ Ձեզ միայն սրտանց խորհուրդ տալ դիմել դէպի այդ աղբիւրները:

II. Այժմ դառնանք ծնունդների խնդրին և տեսնենք ծնունդների դրութիւնը այն երկիրներում, ուր խնդիրը ստատիստիկապէս հետազօտուած է, ուրեմն գրաւորապէս Եւրոպայի երկիրներում: Ես այստեղ կրկնում եմ նոյնը, ինչ ասացի պսակների հարցի նկատմամբ. ես կ'տամ միայն անհրաժեշտը, ամենակարեւորը, բաւականալով մնացեալի համար Ձեզ միայն հաղորդել, թէ ինչ կողմերից ուսումնասիրուած է այդ հարցը, թէ ինչ կարող էք գտնել գրականութեան մէջ, եթէ Ձեր մէջ ցանկացողներ լինին դիմել դէպի նա: Թոյլ տուէք ինձ, Տիկիներ և Պարոններ, Ձեզ այս ասել — այդ խոստովանքը ինձ ոչինչ չէ նստում — որ այս դասախօսութիւնների նախագիծը կազմելիս իմ ջանքերը գլխաւորապէս



դարձրած էին դէպի մի բան՝ ճաշակ պատրաստել մեր հասարակութեան մէջ քաղաքատնտեսական գիտութիւնը ուսումնասիրելու, հասարակաց երևոյթները դիտելու, հասարակաց և տնտեսական հարցերը գիտնական հետազոտութիւններէի տուած հիմունքների տեսակէտից ճանաչելու, պարզելու համար: Ազգերի հասարակաց բարօրութեան վերաբերեալ հարցերը երբէք անպայման անսխալականութեամբ չեն լուծվում, ուզում եմ ասել՝ չեն լուծուած, ասածիս իսկութեանը կ'վկայէ քաղաքակրթութեան մէջ ամենից հռչակուած հին և նոր ազգերի անցեալը: Գիտութիւնը կարող էր անպայման ճիշտ կերպով լուծել կեանքի խնդիրները, եթէ միայն ոչ մի տարակոյս չ'կայանար նորանում, թէ ինչ է կեանքը, սորա վերջնական նպատակը: Քանի որ այդ մեծ խնդիրը վճռելու համար մեր մարդկային մտքի ոյժերը չափազանց թուլ են, — գիտութիւնը կ'ներկայացնէ մեզ միայն յարաբերական, երբէք բացարձակ, արսուլուտ ճշմարտութիւններ: Բայց յարաբերութեամբ ինչ բանի, դորանումն է հարցը: Ես կ'պատասխանեմ՝ յարաբերութեամբ այն գաղափարին, որ մենք ունինք առաջադիմութիւն ասած բանի վերայ: Կեանքի վերաբերեալ գիտութիւնները ուղղած են դէպի այն հարցերը, որոնց լուծումից մենք յառաջադիմութիւն ենք սպասում. երթալ յարատե այդ շաւղով կարելի է միայն գործելով գիտակցաբար, որովհետեւ յառաջադիմութեան շաւղը մեզ պատրաստի չէ տուած, այլ մենք նորան դեռ պիտի որոնենք: Եւ ինչ միջոցներով. գիտութիւնների միջոցով, որովհետեւ միայն գիտութեան միջոցով մենք կարող ենք մի պատճառի հեռաւոր հետեանքները ճանաչել, բայց մենք կարող ենք մեր իդէալին համեմատ մօտաւոր կամ հեռաւոր ապագայի համար մի բան ցանկանալ, որ կատարուի. մեզ կը

մնայ ներկայիս համար ուրեմն գործել այնպէս, որ նա պատճառ լինի մեր ցանկացածի կատարուելուն: Գիտութիւնը այդ պատճառով անհրաժեշտ է, թէ յառաջադիմութեան համապատասխան իդէալ կազմելու և թէ այդ իդէալը իրականացնելու համար պատշաճաւոր միջոցներ որոնելու և կեանքին ուղղութիւն տալու համար: Զգտենք ուրեմն ճանաչել կեանքը իւր բազմակողմանի արտայայտութիւններով և չմոռանանք, որ բոլոր գիտութիւններից քաղաքատնտեսութիւնը ամենակարեւորը և ամենահիմնականն է այդ նպատակին հասնելու համար:

Ծնունդների յաճախութիւնը մի երկրում, խօսք չը կայ, կախուած է այդ երկրի բնակիչների ծննդական բերութիւնից. և մենք ասացինք վերը, որ բերրութիւնը, նայած ազգին և ցեղին, զանազան երկիրներում զանազան է լինում: Բայց բերրութիւնը իմանալու համար մենք հաշուի մէջ ենք գցում միայն պսակների թիւը և ծնուած երեխաների թիւը, համեմատում ենք նոցա իրար հետ և տեսնում, թէ մի պսակի վրայ զանազան երկիրներում և կամ միւլնոյն երկրում, բայց զանազան դարէջըջաններում որքան երեխաներ են ընկնում: Այդ հաշիւը անելու համար մի քանի մեթօդներ են գործ դնում: Առաջի և սովորական եղանակը այն է՝ որ տարիների մի շարքի համար, օրինակ, հինգ տարիների համար, համեմատում են պսակների թիւը նոյն հինգ տարիներում ծնուած երեխաների թիւի հետ. և այդ հանգամանքում սովորաբար վերցնում են միայն օրինապէս պսակուածների և օրինապէս ծնուածների թիւերը: Մի ստատիստիկական ցուցակ, որը շինուած է այդ մեթօդով բայց ուր չէ ասուած, թէ որ և որքան տարիների են վերաբերում գտած թիւերը, և հրատարակուած 1872 թը-



ւին, Հետեւեալ կերպով է գասում Եւրոպայի զանազան երկիրները բերրութեան նկատմամբ:

Միջին թիւ երեխաների մի պսակի համար:

|           |       |             |       |
|-----------|-------|-------------|-------|
| Իրլանդիա  | 4. 82 | Շոտլանդիա   | 4. 51 |
| Իտալիա    | 4. 79 | Վիւրտեմբերգ | 4. 35 |
| Յունաստան | 4. 73 | Ունգարիա    | 4. 31 |
| Ռուսիա    | 4. 72 | Շվեյցիա     | 4. 30 |
| Իսպանիա   | 4. 52 | Նորվեգիա    | 4. 29 |
| Հոլլանդիա | 4. 12 | Սաքսոնիա    | 3. 85 |
| Պրուսիա   | 4. 11 | Դանիա       | 3. 73 |
| Անգլիա    | 3. 95 | Բաւարիա     | 3. 29 |
| Բելգիա    | 3. 93 | Ֆրանսիա     | 3. 07 |
| Աւստրիա   | 3. 92 |             |       |

Այդ ցուցակի համեմատ, այն երկիրները, ուր պըսակները ամենից շատ պտղաբեր են, Իրլանդիան է, Իտալիան, Յունաստանը, Ռուսիան և այլն, իսկ ուր նոքա աւելի նուազ պտղաբեր են, այդ Բաւարիայումն է և մանաւանդ Ֆրանսիայում:—Համեմատ մի այլ ցուցակի, որը կազմել է Բերտիլիօնը 1861—65 թւականների համար, Հետեւանքները գրեթէ նոյնն են, ինչ մենք վերը տեսանք. այդ ցուցակում ամենից առաջ գալիս են՝ Ռուսիան, Իսպանիան, Իտալիան, իսկ շարքի վերջը գալիս են Դանիան, Բաւարիան և Ֆրանսիան: Միւսները բռնում են դոցա մէջ տեղը:

Ծննդական բերրութիւնը իմանալու համար գործ են ածում նաև մի այլ մեթօդ՝ մի շարք տարիներում ծնուածների թիւը համեմատում են 15-ից մինչ 45 տարեկան պսակուած կանանց թւի հետ: Այդ մեթօդով վարուած, Բերտիլիօնը գտաւ, որ 15-ից մինչ 45 տարեկան

Հասակի ամեն 100 կանանց վրայ ընկնում են՝ Ֆրանսիայում՝ 20. 67, երեխաներ, Փարիզում միայն 14. 56, Անգլիայում 30. 02, Հոլանդիայում 34. 2, Դանիայում 32. 15:

Եթէ ծնունդների թիւը կախում ունէ պսակների բերրութիւնից, այդ սակայն չ'պիտի այնպէս հասկանալ, թէ ծնունդների յաճախութիւնն ասելով, մենք իբր պսակների բերրութիւն ենք հասկանում: Ոչ. քաղաքատնտեսին հարկաւոր է իմանալ ոչ այնքան բերրութեան աստիճանը, որքան այն, թէ մի երկրում ծնուածների թիւը որ մասն է կազմում ամբողջ ազգաբնակչութեան: Դուք դեռ կը տեսնէք, Տիկիններ և Պարոններ, թէ ինչու այդ բանի իմանալը կարեւոր է. այստեղ միայն թոյլ տուէք նկատել, որ եթէ մի երկրում բերրութիւնը դիցուք կրկնապատիկ աւելի է, քան մի այլ առաջնի չափ հաւասար բնակիչներ ունեցող երկրում, այդ դեռ չէ նշանակում, թէ առաջնում տարեկան երկու անգամ աւելի երեխաներ են ծնվում, քան երկրորդում: Պատճառը պարզ է. ուր բերրութիւնը մեծ է, կարելի է, որ պսակների թիւը աւելի սակաւ է, քան մի այլ երկրում:

Ծնունդների յաճախութիւնը իմանալու համար, բաժանում են ազգաբնակչութեան թիւը ծնուած երեխաների թւի վերայ, և կամ աւելի լաւ, հաշվում են, թէ 100 բնակիչների վերայ որքան ծնունդներ են ընկնում. դորանով մենք իմանում ենք, թէ ծնունդների թիւը ազգաբնակչութեան որ պրօցէնտն է կազմում: Երբ այդ իմացանք մի շարք տարիների համար, այն ժամանակ դժուար չի լինի միջին թիւ դուրս բերել: Զգուշութեան համար այստեղ ևեթ յայտնենք որ այս ցուցակի մէջ, որ պիտի շուտով հետեւի, մեռած ծնուածները չեն հաշուած: Այս ցուցակը պատկանում է ստատիստիկոս Բօդիօին:



100 բնակիչների վրայ ծնունդների թիվը:

|            | Փրանսիա, | Իրլանդիա, | Շվեյցիա, | Զուիցերիա, | Լեզեիա, | Շոտլանդ. |
|------------|----------|-----------|----------|------------|---------|----------|
| 1865       | 2. 65    | 2. 59     | 2. 62    | "          | 3. 18   | 3. 55    |
| 1866       | 2. 64    | 2. 65     | 2. 66    | "          | 3. 27   | 3. 53    |
| 1867       | 2. 64    | 2. 63     | 2. 49    | "          | 3. 21   | 3. 51    |
| 1868       | 2. 57    | 2. 67     | 2. 23    | "          | 3. 15   | 3. 53    |
| 1869       | 2. 57    | 2. 67     | 2. 30    | "          | 3. 16   | 3. 43    |
| 1870       | 2. 55    | 2. 77     | 2. 32    | 2. 98      | 3. 23   | 3. 45    |
| 1871       | 2. 26    | 2. 81     | 2. 02    | 2. 90      | 3. 10   | 3. 44    |
| 1872       | 2. 68    | 2. 78     | 2. 98    | 2. 98      | 3. 23   | 3. 49    |
| 1873       | 2. 61    | 2. 71     | 2. 06    | 2. 97      | 3. 24   | 3. 48    |
| 1874       | 2. 62    | 2. 66     | 3. 07    | 3. 00      | 3. 26   | 3. 57    |
| 1875       | 2. 60    | 2. 61     | 3. 10    | 3. 19      | 3. 25   | 3. 56    |
| 11 տար.    |          |           |          |            |         |          |
| Միջին թիվ. | 2. 58    | 2. 69     | 2. 71    | 3. 01      | 3. 20   | 3. 50    |

| Անգլիա, | Հոլլանդիա, | Իտալիա, | Պրուսիա, | Աւստրիա, | Բաւարիա, | Ունգ. |
|---------|------------|---------|----------|----------|----------|-------|
| 3. 54   | 3. 59      | 3. 83   | 3. 91    | 3. 77    | 3. 69    | 4. 06 |
| 3. 52   | 3. 53      | 3. 87   | 3. 96    | 3. 79    | 3. 73    | 4. 12 |
| 3. 54   | 3. 52      | 3. 66   | 3. 69    | 3. 71    | 3. 76    | 3. 80 |
| 3. 58   | 3. 48      | 3. 53   | 3. 67    | 3. 78    | 3. 76    | 4. 15 |
| 3. 48   | 3. 39      | 3. 70   | 3. 77    | 8. 93    | 3. 82    | 4. 17 |
| 3. 52   | 3. 59      | 3. 67   | 3. 81    | 3. 96    | 4. 01    | 4. 17 |
| 3. 50   | 3. 53      | 3. 70   | 3. 37    | 3. 89    | 3. 64    | 4. 30 |
| 3. 58   | 3. 58      | 3. 78   | 3. 97    | 3. 97    | 3. 97    | 4. 10 |
| 3. 55   | 3. 60      | 3. 63   | 3. 97    | 3. 95    | 4. 08    | 4. 22 |
| 3. 61   | 3. 61      | 3. 50   | 4. 00    | 3. 61    | 4. 09    | 4. 26 |
| 3. 55   | 2. 63      | 3. 79   | 4. 03    | 3. 94    | 4. 16    | "     |
| 3. 54   | 3. 55      | 3. 70   | 3. 83    | 3. 86    | 3. 91    | 4. 13 |

Այդպիսով Գուք տեսնում էք, որ տասնամեկ տարիների միջին հաշուով, Նւրդպայի այն երկիրները, ուր, բնակիչների թվի համեմատ, ամենից շատ թվով երեխաներ են ծնվում, են Ունգարիա, լեռնային Բաւարիա, Պրուսիա, Իտալիա, Հոլլանդիա, Անգլիա, Շոտլանդիա, Բելգիա, Զուիցերիա և լեռնային միայն Շվեյցիա և վերջապէս ամենաքիչ թվով ծնվում են Փրանսիայում: Այդ թվերը Զեզ ներկայացնելու նպատակը, ի հարկէ, այն չէ, որ Գուք

իմանաք, որ երկրում որքան ծնունդներ են լինում. այդ տեղեկութիւնները կարող են Զեզ նաև չհետաքրքրել, եթէ երբէք կարելի է այդ տեսակ տեղեկութիւնների դիմաց անտարբեր մնալ. միայն թէ ամենաօգտակարը այստեղ այն եզրակացութիւններն են, որոնց տեղի են տալիս բերած թվերը: Այդ թվանշաններից մենք նախ եզրակացնում ենք, որ ծնունդների թիւը, միւսնոյն երկրում, տարիների ընթացքում, մեծ մասամբ, շատ աննշան կերպով է փոխվում, մասնաւոր եթէ մի պատերազմ կամ դժուար նման մի խոչընդոտ չէ խանգարում ազգերի խաղաղ կեանքը: Երկրորդ, ես Զեր ուշադրութիւնն եմ դարձնում այն հանգամանքի վերայ, որ երկիր երկրի մէջ ծնունդների յարաբերական յաճախումը երբեմն շատ տարբերվում է. և խկապէս տեսէք ինչ մեծ զանազանութիւն կալ այդ բանում Փրանսիայի և Ունգարիայի կամ նոյն իսկ Բաւարիայի մէջ. մինչդեռ 10,000 բնակիչների վրայ Փրանսիայում ծնվում են միայն 258 երեխաներ, Ունգարիայում ծնվում են արդէն 413, և Բաւարիայում 391, Պրուսիայում 383 երեխաներ: Բայց այդ ցուցակը մեզ միւսնոյն ժամանակ իմանալ է տալիս, թէ մօտաւորապէս ինչսահմանների մէջ մենք պէտք է երեւակայենք մեզ ծնունդների յաճախութիւնը մի որևիցէերկրում առհասարակ և մի քաղաքում կամ գիւղում առանձնապէս, եթէ մեզ յայտնի է այս վերջինների բնակիչների թիւը:

Մի նշանաւոր երևույթ, որը նկատուած է ծնունդների յաճախութեան մէջ, այդ այն է, որ եթէ վերջնելու լինենք տարիների մի երկար շարք և հաշուենք իւրաքանչիւր հինգ կամ տասը տարիների պրօցէնտական ծնունդները, կ'տեսնենք, գոնէ Նւրդպայի շատ երկիրներին համար, որ այդ պրօցէնտը, քանի գնում, այնքան նուազում է: Մենք բաւականանում ենք, այդ հաստա-



տելու համար, հետևեալ թւանշանները առաջ բերելով: Մենք ունենք բոլոր ֆրանսիական ծնունդների ցուցակը սկսած 1815 թվից մինչ այս օրերս. այդ ցուցակից դուրս է գալիս, որ 1815 թվից մինչ 1820 թիւը ազգաբնակչութեան ամեն մի 100 հոգու վրայ ընկնում էին 3. 19 ծնունդներ, հետևեալ աասը տարիներում՝ 3. 10 ծնունդներ միայն, հետևեալ 1830—35 տարիներում՝ 2. 96, յետոյ միւս հինգ տարիների շրջանների համար մինչ 1865 թւականը՝ 2. 84, 2. 81, 2. 67, 2. 61, 2. 65 և 2. 66: Այդ երեւոյթի պատճառը գլխաւորապէս պէտք է որոնել նորա մէջ, որ նոյն ժամանակամիջոցում պսակների յարաբերական թիւը սակաւացել է:

Ծնունդների հարցը ուսումնասիրուած է նաև մի քանի այլ կողմերից. օրինակ, թէ զանազան երկիրներում երկւորեալները որքան յաճախ են պատահում: Բայց այդ մի հարց է, որը բժիշկներին հետաքրքրել կարող է. քաղաքատնտեսի համար այդ հարցը կարեւորութիւն չունէ: Մեզ համար դորանից շատ աւելի կարեւորութիւն ունէ այն հարցը, թէ արդեօք բոլոր ծնունդների մէջ ինչ քանակութեամբ տղաներ և որքան աղջիկներ են պատահում: Դուք գուցէ զարմանաք այդ հարցի վերայ. միթէ, կ'ասէք Դուք, այդ ուսումնասիրելու բան է. միթէ տղաների և աղջիկների մէջ մի որեւիցէ քանակական յարաբերութիւն կայ: Այո՛, մենք Ձեզ հետ միասին զարմանում ենք և զարմանում ենք միայն այն պատճառով, որ այդ յարաբերութիւնը կայ, բայց մեկնել այդ երեւոյթը գիտութիւնը դեռ չէ կարողացել: Արդ, այդ հաստատուած մի բան է, որ բոլոր ծնունդների մէջ, որ մի երկրում պատահում են, արական և իգական սեռերը գրեթէ հաւասար կերպով են մասնակցում: Բայց այդ դեռ բոլորը չէ. ես ասացի «գրեթէ», իսկ այդ բառի տակ մի մեծ խորհուրդ

է ծածկուած: Բոլոր այն երկիրներում, որոնք վիճակագրուած են, տղաներ մի փոքր աւելի մեծ քանակութեամբ են ծնվում, քան աղջիկներ, այն է, 100 աղջիկ-ծնունդների վրայ ընկնում են մօտաւորապէս 105 տղա-ծնունդներ: Այս իրողութիւնը շատ հետաքրքիր և նըշանաւորէ, որպէս զի ես վստահ լինիմ Ձեր թոյլաւորութեան վերայ ներկայացնել Ձեզ այս ցուցակը, չ'նայած որ երկարութեան: Այս ցուցակը կազմուած է համեմատ այն վիճակագրական թւերի, որոնք հաւաքուած են 1861 մինչ 1865 թւականները. նա ներկայացնում է, սւրեմն, հինգ շարունակ տարիների հետևանք և տպուած է այն հրատարակութեան մէջ, որը կրում է «Փրանսիայի պաշտօնական վիճակագրութիւն» վերնագիրը: Երկիրները այդտեղ դասաւորուած են ըստ տղաների նուազագույն քանակութեան:

Ամեն 100 աղջիկների դիմաց ծնուեցին տղաներ (կենդանի ծնուած երեխաներ, և օրինաւոր ու ապօրինիները միասին առած):

|           |         |
|-----------|---------|
| Իսպանիա   | 106. 56 |
| Իտալիա    | 106. 43 |
| Աւստրիա   | 106. 32 |
| Ունգարիա  | 105. 85 |
| Նորվեգիա  | 105. 76 |
| Հոլլանդիա | 105. 76 |
| Բաւարիա   | 105. 58 |
| Իրլանդիա  | 105. 51 |
| Շոտլանդիա | 105. 45 |
| Բելգիա    | 105. 42 |
| Ֆրանսիա   | 105. 13 |
| Դանիա     | 105. 12 |
| Սաքսոնիա  | 105. 08 |
| Պրուսիա   | 105. 02 |



|            |         |
|------------|---------|
| Շվեդիա     | 104. 73 |
| Զուիցերլա  | 104. 50 |
| Ռուսիա     | 104. 43 |
| Անգլիա     | 104. 32 |
| Վերտեմբերգ | 104. 02 |

Նմանօրինակ թւանշաններ ենք ստանում, երբ աչքի ենք առնում վիճակագրութիւնները 1865-ից մինչ 1875: Ուրեմն, տղաներ քիչ աւելի են ծնվում, քան աղջիկներ: Դրանից դեռ չ'պետք է իսկոյն եզրակացնել, թէ նոյն երկիրներում արական սեռի մարդիկ աւելի են, քան իգական: Այդ սխալ կ'լինէր. բնդհակառակը, իգական սեռի ազգաբնակչութիւնը միշտ մի փոքր աւելի է արականից և դորա պատճառը այն է, որ, ինչպէս այդ ներքե դեռ կ'հաստատուի, տղայ երեխաները աւելի են մեռնում, քան աղջիկներ. այնպէս որ շուտով տղաների և աղջիկների թւերը հաւասարվում են և մինչև անգամ մի յայտնի հասակից յետոյ, իգականները թրւով դեռ մի փոքր գերադանցում են արականներից. նըշանակում է, որ մատաղ հասակում տղաներ աւելի են, հասակաւորների մէջ՝ կանայք աւելի են, քան տղամարդիկ և այդ յարաբերութիւնները այն տեսակի են, որ բնդհանուր առմամբ իգականները 10,000 ազգաբնակչութեան վերայ նալած երկրին մօտ 30-ից մինչ 150 հոգով տղամդերից արգերազանցում են:

Հասարակական տեսակէտից մեծ կարևորութիւն ունէ նաև այն հարցը, թէ ծնունդների թւի մէջ որ մասն են կազմում օրինաւոր պսակներից ծնուած զաւակները և որ մասը՝ ապօրինի զաւակները: Կասկած չ'կայ, որ ապօրինի զաւակների յաճախութեան աստիճանը սերտ կերպով կապուած է մի ազգի բարոյական կրթութեան աստիճանից, հասարակաց բարք ու վարքի եղանակից,

տնտեսական դրութիւնից և, վերջապէս, մի երկրում իշխող պսակի օրէնքներից: Պատճառները այսպէս բաղադրեալ լինելով, ինչ հարկ կայ ասելու, որ ապօրինի զաւակները ամենից յաճախ են պատահում մեծ քաղաքներում և նոյնքան յաճախ, որքան կեանքը այնտեղ բաղադրեալ է, հեռու նահապետական պարզութիւնից: Այնպէս որ, եթէ ասելու լինենք, թէ 1865 մինչ 1875 թիւը միջին թւով Ֆրանսիայում ամեն մի 100 ծնուածներից 7. 41 (որ նոյնն է թէ 10,000-ից 741) ապօրինի զաւակներ են եղել, Դուք պիտի և այս գիտենաք, որ Փարիզում, հէնց նոյն իսկ անցեալ տարի, 1882 թւին, ծնուել են բնդամենը 62,581 երեխաներ, որոնցից 16,522, ուրեմն ոչ 7. 41 այլ դեռ աւելի քան 25% ապօրինի: Բայց այն երկիրը, որը, բնդհանուր առմամբ, ամենից շատ ապօրինի զաւակներ է տալիս, այդ Բաւարիան է, ուր նոքա 1865—75 միջին թւով բոլոր ծնունդների 16. 86 պրօցէնտը կազմեցին. յետոյ գալիս է Աւստրիան 13. 30 պրօցէնտով, Շվեդիան 10. 40%, Պրուսիան 7. 79%, Ֆրանսիան, որպէս վերը յիշեցի, 7. 41%, Ունգարիան 7. 08%, Բելգիան 7. 05%, և յետոյ միայն Իսալիան 6. 28 պրօցէնտով, Անգլիան 5. 71%, Զուիցերիան միայն 4. 76 պրօցէնտով:

Ստատիստիկոսները հետաքրքրուել են նաև որոշելու, թէ ինչպէս են հետևում ամիսները ըստ ծնունդների յաճախութեան և գտել, որ և այդ դիպումածում զանազան երկիրներ իրարից զգալի կերպով չեն տարբերվում: Սակայն մենք պիտի շտապենք և խօսենք մահացութեան մասին, որ ազգաբնակչական խնդիրներում մի մեծ տեղ է բռնում:

III. Մահացութեան վերաբերեալ հետազօտած և հետազօտելու գլխաւոր կէտերը սոքա են՝ մի ամբողջ շարք



տարիների համար միջին թվով մահացութիւնը որ մասն է կազմում մի երկրի ազգաբնակչութեան. տարիների ընթացքում մահացութիւնը յարաբերապէս, այսինքն պրօ-ցէնտով հաշուած, մի երկրում աւելանում է թէ նուազում. մահացութիւնը որքանով աւելի կամ պակաս է նոյն երկրի տարեկան ծնունդների թւից. երկիր երկրի հետ համեմատած, մահացութիւնը որքանով է իրարից զանազանվում, մահի պատեհները որքան են ըստ մարդկանց հասակներին և նայած անձերի քաղաքային դիրքին, այսինքն պսակուածների համար և չ'պսակուած հասակաւոր անձերի համար. որքան է մահացութիւնը արականների և իգականների մօտ, որքան է մահացութիւնը քաղաքներում և որքան գիւղերում. ինչ զանազանութիւն է նկատվում մահացութեան մէջ նայած մարդկանց արհեստներին և այլն: Մենք կ'աշխատենք այդ հարցերին այն չափով պատասխանել, որքան այդ թոյլ կ'տայ մեր այս դասախօսութեան մէջ ընդունած մեթօդը:

Թէ որքան է մահացութիւնը Եւրոպայի զանազան երկիրներում և միևնոյն երկրում, բայց մի շարք տարիներում, ցոյց է տալիս հետևեալ ցուցակը:

Մահացութիւնը յարաբերութեամբ դէպի ազգաբնակչութիւնը, հաշուած 100 հոգու վրայ:

| Տարիներ: Իրլանդիա, Շվեդիա, Անգլիա, Շոտլանդ, Բելգիա, Զուիցեր. |       |       |       |       |       |       |
|--------------------------------------------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| 1865                                                         | 1. 67 | 1. 92 | 2. 32 | 2. 22 | 2. 45 | "     |
| 1866                                                         | 1. 69 | 1. 98 | 2. 34 | 1. 21 | 3. 13 | "     |
| 1867                                                         | 1. 71 | 1. 96 | 2. 17 | 2. 12 | 2. 15 | "     |
| 1868                                                         | 1. 59 | 2. 70 | 2. 19 | 2. 11 | 2. 16 | "     |
| 1869                                                         | 1. 64 | 2. 23 | 2. 23 | 2. 29 | 2. 18 | "     |
| 1870                                                         | 1. 67 | 1. 97 | 2. 29 | 2. 21 | 2. 32 | 2. 85 |
| 1871                                                         | 1. 64 | 1. 71 | 2. 26 | 2. 21 | 2. 85 | 2. 76 |
| 1872                                                         | 1. 82 | 1. 62 | 2. 13 | 2. 22 | 2. 32 | 2. 22 |
| 1873                                                         | 1. 83 | 1. 71 | 2. 11 | 2. 24 | 2. 14 | 2. 27 |
| 1874                                                         | 1. 73 | 2. 04 | 2. 23 | 2. 23 | 2. 05 | 2. 23 |
| 1875                                                         | 1. 85 | 2. 03 | 2. 28 | 2. 34 | 2. 27 | 2. 40 |
| Միջին հաշուով                                                | 1. 71 | 1. 99 | 2. 23 | 2. 23 | 2. 37 | 2. 41 |

| Յքանիա, Հոլլանդ. | Պրուսիա, Իտալիա, Բաւարիա, Աւստրիա. Ունգ. |       |       |       |       |       |
|------------------|------------------------------------------|-------|-------|-------|-------|-------|
| 2. 43            | 2. 58                                    | 2. 68 | 2. 98 | 3. 07 | 3. 03 | 2. 92 |
| 2. 12            | 2. 86                                    | 2. 35 | 2. 90 | 3. 02 | 4. 08 | 3. 80 |
| 2. 27            | 2. 36                                    | 2. 66 | 3. 42 | 2. 92 | 2. 93 | 3. 28 |
| 2. 36            | 2. 48                                    | 2. 73 | 3. 05 | 3. 05 | 2. 85 | 3. 30 |
| 2. 34            | 2. 31                                    | 2. 57 | 2. 77 | 3. 14 | 2. 89 | 3. 12 |
| 2. 83            | 2. 57                                    | 2. 60 | 2. 98 | 3. 12 | 2. 64 | 3. 25 |
| 2. 48            | 2. 94                                    | 2. 83 | 3. 00 | 3. 40 | 3. 00 | 3. 89 |
| 2. 20            | 2. 57                                    | 2. 92 | 3. 05 | 3. 11 | 3. 27 | 4. 22 |
| 2. 33            | 2. 40                                    | 2. 79 | 3. 00 | 3. 15 | 3. 87 | 6. 51 |
| 2. 12            | 2. 26                                    | 2. 56 | 3. 03 | 3. 10 | 3. 13 | 4. 26 |
| 2. 31            | 2. 56                                    | 2. 64 | 3. 07 | 3. 14 | 2. 96 | "     |
| 2. 44            | 2. 53                                    | 2. 75 | 3. 02 | 3. 11 | 3. 18 | 3. 15 |

Ես չեմ կասկածում, Տիկիներ և Պարոններ, որ Դուք կարող էք կարդալ այդ թվանշանները, միայն թէ ընթերցանութիւնը հեշտացնելու համար ես կ'աւելացնեմ մի երկու խօսք, թէ ինչպէս են գտնվում նոքա: Վերջնենք օրինակ Բելգիան: Դուք տեսնում էք, որ այդ անունի տակը, երկրորդ շարքում, այսինքն 1866 թուականի համար, գրած է 3. 13: Ի՞նչպէս է գտնուած այդ թվանշանը: Ահա ինչպէս: Այդ թվականին, 1866-ին, Բելգիան ունէր 4,827,833 բնակիչներ. իսկ այդ նոյն տարուայ մէջ մեռածների թիւը էր 151,118. այդ նշանակում է, որ տասը հազա բնակիչների հաշուով, Բելգիայում այդ թւին մեռած են 313 անձեր 1000 բնակիչների հաշուով՝ 31. 3, իսկ 100 բնակիչների հաշուով՝  $3^{13}/_{100}$  անձեր: Այդ կոտորակների վերայ, Դուք չ'պիտի զարմանաք. խօսք չ'կայ, որ մի անձ չէ կարող  $^{13}/_{100}$  երրորդական չափով մեռնել. բայց ստատիստիկայի մէջ ընդունուած է հասարակ թւեր դուրս բերել, որպէս զի համեմատութիւնները հեշտանան: Աչքի համար, աւելի հեշտ է համեմատել 3. 13 և 2. 45 քան թէ 313 և 245:



Վերի ցուցակի մէջ եւ դասաւորել եւ երկիրները ըստ մահացութեան աճող աստիճանների, որպէս զի հեշտութեամբ կարողանաք տեսնել, թէ որ երկիրը ամենից քիչ մահացութիւն ունէ, որը՝ աւելի շատ և ալլն: Եթէ Դուք Ձեզ նեղութիւն տալու լինէք համեմատել մահացութեան այդ ցուցակը ծնունդների այն ցուցակի հետ, որը եւ Ձեզ առաջ ներկայացրեցի, Դուք կ'զտնէք շատ հետաքրքիր բաներ: Նախ Դուք կ'զտնէք, որ, իւրաքանչիւր երկիր իւր համար վերցրած, մահացութիւնը աւելի նուազ է քան ծնունդների թիւը. բայց այդ մի կէտ է, որին լիտոյ վերադառնալու դեռ առիթ պիտի ունենանք: Երկրորդ, Դուք կ'նկատէք, որ այն երկիրները, որոնք ամենից քիչ ծնունդներ ունեն, նոքա և ընդհանրապէս աւելի սակաւ մահացութիւն ունեն և, ընդհանրապէս, ամենից շատ ծնունդներ ունեցող երկիրը ընդհանրապէս ամենից էլ շատ մահացութիւն ունէ: Եւ առաջինը և այս երկրորդ երկուքը մի ազգի աճելութեան աստիճանի վրայ ազդեցութիւն ունեն. բայց գորտ մասին դեռ ներքեւ պիտի խօսենք: Ընդհանուր մահացութիւնը, որը մենք ներկայացրինք վերը բերած ցուցակի մէջ, դեռ այնքան հետաքրքիր չէ, որքան նորա մանրամասնութիւնները, որոնցից մէկը այն է, թէ ինչպէս են մասնակցում մահացութեան մէջ արական և իգական սեռերը: Յայտնելով, քիչ առաջ, որ տղերք աւելի են ծնվում, քան աղջիկներ, մենք ասացինք, որ տղերքը աւելի են մեռնում քան աղջիկները և խոստացանք ապացոյց բերել իւր տեղում, որը ահա. 1865 մինչ 1875 տարիների միջին թւերը ցոյց են տալիս, որ 100 իգական սեռի մահերի դիմաց հաշուում են Փրանսիայում, Բաւարիայում և Աւստրիայում՝ 107 մահեր արական սեռի անձերի. Իտալիայում, Անգլիայում, Բելգիայում՝ 106.

Չուեցերիայում՝ 106. 5, Հոլլանտիայում և Շվեյցարիայում՝ 104, Պրուսիայում և Ունգարիայում՝ 108 արական մահեր:

Մենք այստեղ մտադիր ենք դադարեցնել մեծաքանակ թւանշաններ բերելը մահացութեան այլ երեւոյթները սլարգելու և ապացուցանելու համար, որովհետեւ աններելի չէ մտածել, որ մեր հասարակութիւնը դեռ չէ վարժուած թւանշաններ կարդալու մէջ. թէպէտեւ, ըստ իս, ոչինչ չէ կարող այնքան ոյժով մարդու ուշադրութիւնը գրաւել, որքան թւանշանները, երբ սոքա մտքեր, ճշմարտութիւններ են յայտնում, մասնաւոր երբ այդ մտքերը հասարակաց և մեր սրտի ամենամօտ խնդիրներին են վերաբերում: \*) Մենք կ'բաւականանանք այլ կէտերին վերաբերեալ, ուրեմն, միայն այս ընդհանուր եզրակացութիւնները յայտնելով, որ, 100 մահերից, նայած երկրին, առնուազը մօտ 25 մինչ 40 և երբեմն մինչ 50-ը ընկնում են մանր, այն է մինչ 5 տարեկան հասակի երեխաների վերայ. իսկ ընդհանրապէս, մինչ հինգ տարեկան հասակի երեխաների մահացութիւնը մի երկրում եղած տարեկան բոլոր մահերի երրորդ մասից աւելի է կազմում: Ձեզ եւ թողնում, Տիկիներ և Պարոններ, ըստատիստիկական այդ եզրակացութիւնների ճարտարութիւնը հասկանալ. իսկ իմ գործս թող լինի միայն և այս աւելցնել, որ այն զարհուրելի կոտորածը, որը իշխում է մինչ հինգ տարեկան հասակի երեխաների մէջ, ամենից, այո՛, անհամեմատ աւելի մեծ քանակութեամբ հարուածում է մինչ մի տարեկան հասակի երեխաներին: Այս հարցը բազմիցս հետաքրքրել է բանասէրներին և գիտնականներին, թէ արդեօք ինչ պէտք է մտածել

\*) Թող այս աշխատութիւնը մի երկրորդ տպագրութեան բալդէին արժանանայ, և մենք խոստանում ենք շատ աւելի լիակատար լինել:



այն փաստի դիմաց, որ անպսակ անձերի մէջ մահացութիւնը աւելի է տիրում, քան պսակուածների մէջ: Այս հարցով ամենից շատ հետաքրքրվողներ եղել են բժիշկների շրջաններում. բայց բժիշկ-գրողները, նոյն իսկ սոցանից ամենանշանաւորները, այդ խնդիրը քննելիս, շատ սահմանափակ կերպով իրանց դրել են բժշկականութեան, առողջապահական տեսակէտի վրայ, այնպէս որ վերը յիշած փաստից նոքա շինել են աւելի քարոզի մի միջոց, քան բազմակողմանի ուսումնասիրութեան առարկայ: Բայց այսպէս կամ այնպէս, պէտք է ասած, որ այդ երևոյթի մասին գրածները և յայտնած կարծիքները քիչ կամ ոչինչ դրական չեն պարունակում իրանց մէջ:

IV. Տիկիներ և Պարոններ, մենք աշխատեցինք ծանօթանալ մի քանի նշանաւոր երևոյթների հետ, որպէս են պսակները, ծնունդները և մահացութիւնը և սոցամանրամասնութիւնների հետ այն տեսակէտը, որ ազգաբնակութեան ուսման համար կարևոր է, այն է՝ քանակական տեսակէտից. և այդ ծանօթութիւնը կատարուեց այն երկիրների հետ, որոնք ուսումնասիրութեան համար դրական նիւթեր են առաջարկում մեզ: Բայց վերցնելով դրական տեղեկութիւնները եւրոպական ազգերի կեանքից, մենք ուզեցինք մի և նոյն ժամանակ ցոյց տալ այն մեթոդը, որով պէտք է ուսումնասիրուեն ամեն մի ուրիշ երկրի ազգաբնակչական երևոյթները: Բայց ազգաբնակչական երևոյթների ուսումնասիրութիւնը մենք դեռ չ'վերջացրինք. մեզ դեռ մի բան է մնում իմանալու, թէ արդեօք այն բոլոր երևոյթները, որոնց հետ մենք ծանօթացանք, ինչպէս են ազդում մի երկրի ազգաբնակութեան մեծութեան վերայ: Պսակների որքանութիւնից և պսակների բերրութիւնից կախուած է մի երկրի մէջ եղած և լինելու ծնունդների որքանութիւնը,

իսկ մահերի որքանութիւնից կախուած է այն բանը, թէ արդեօք ազգաբնակութիւնը կազմող անձերի թիւը աճում է, թէ նուազում. իսկ տարեցտարի և դարեցդար աճելուց կախուած է մի ազգի, մի երկրի ազգաբնակութեան մեծութիւնը. և, վերջապէս, մի երկրի ազգաբնակութեան մեծութիւնից կախուած է այդ երկրի ազգաբնակութեան խտութիւնը, այսինքն այն՝ թէ, երկրի հողի մեծութեան համեմատ, մարդիկ որ աստիճանի խիտ են բնակուած: Իսկ ազգաբնակութեան խտութիւնը ամենաահագին նշանակութիւն ունեցող հանգամանքներից մէկն է քաղաքատնտեսի համար: Որքան խիտ է բնակեցւած մի երկիր, նոյնքան մեծ նեղութիւն է կրում ժողովուրդը ապրելու համար, որովհետեւ հողը այնքան քիչ բաւականութիւն է տալիս նորա պահանջներին. այդ նեղութիւնը դրդում է ազգերին դէպի երկրագործական, տեխնիկական կատարելագործութիւններ և ստիպում է նորան ունենալ առևտրական յարաբերութիւններ արտասահմանի հետ. նոյն հանգամանքը մղում է ազգերին դէպի արհեստներ, որոնք աւելի ձեռնտու են դառնում քան երկրագործութիւնը, որով ամբողջ ազգը զբաղուել այլ ևս չէ կարող: Ազգաբնակութեան խտութիւնը այդպիսով փոփոխել է տալիս հողային սեպհականութեան ձևերը, իսկ դորանից ծնվում են շատ և շատ ուրիշ խնդիրներ, լուծելու համար մինը միւսից դժուար: Ազգաբնակութեան խտութիւնից և աճելու ոյժից կախուած է մինչ մի յայտնի աստիճան բնակիչների հարստութեան և չքաւորութեան աստիճանը, խտութեան հետ կապուած է գաղթականութեան հարցը և այլն և այլն: Մի խօսքով, ես չ'գիտեմ մի այլ հանգամանք, որը այնքան մեծ ազդեցութիւն ունենար մի ազգի տնտեսական և դորա հետ միասին բարոյական և քաղաքական կեան-



քի վերայ, որքան մի երկրի ազգաբնակիւթեան խտութիւնը: Հարկ կայ աւելցնել, արդեօք, թէ մի երկրի ազգաբնակիւթեան խտութեան աստիճանը իւրաքանչիւր դարի համար գոնէ մօտաւորապէս ճանաչելը մի պարտք է նաև ամեն մի պատմաբանի համար: Կարող է արդեօք պատմաբանը ուսումնասիրել մի երկրի հասարակաց և քաղաքական դրութիւնը և փոփոխութիւնները առանց հետազոտելու ազգաբնակիւթեան խտութեան աստիճանը: Այդ կ'նշանակէր վտանգի ենթարկուել շատ բաներ կամ ամենեւին չ'հասկանալ և կամ ոչ ճիշդ մեկնել: Ենթադրեցէք, մի ընդհանուր, Տիկիններ և Պարոններ, որ մի ապագայ պատմաբան յանկարծ գտնում է, որ մեր 19. դարում Եւրոպայի մի քանի երկիրներից, որպէս օրինակ Պերմանիայից, տարեկան հարկւր հազարներով մարդիկ են գաղթում դէպ Ս.մերիկա, բայց այս կամ այն պատճառով, մեր դարից շատ յիշատակներ չեն մնացել, որպէս զի այն մեծ պատմական փաստը մեկնել կարողանայ և նա կ'մնայ զարմացած, թէ ինչու Ֆրանսիացիք չէին գաղթում, իսկ գերմանացիք գաղթում էին: Ես երեւակայում եմ, թէ այն ապագայի ենթադրեալ պատմաբանները և այլ գիտնականները ինչ մեկնութիւններ կ'տային այդ երեւոյթին և ով գիտէ ինչ չեղած յատկութիւններն կ'վերագրէին նոքա այն երկու ազգերին, որպէս զի մի կերպով հարցը պարզուէր: Եւ որքանով խնդիրը կ'պարզուէր, եթէ մեր այժմեան ստատիստիկական աշխատանքներից մի թերթ մնացած լինէր նոցա ասելու համար, թէ գերմանացիք 19. դարում չորս-հինգ անգամ աւելի էին աճում, քան թէ Ֆրանսիացիք և թէ, ուրեմն, եթէ գերմանացիք չ'գաղթէին, Պերմանիան կ'ունենար ժամանակի հանգամանքների համար հարկաւորից աւելի բարձր աստիճանի ազգաբնակիւթեան խտութիւն, որը կա-

րող էր մեծ թշուառութեան պատճառ դառնալ և այլն: Այդ օրինակը, որ ես բերի, հարկաւ, երեւակայական էր. բայց ես կարծեմ, որ նա համոզեցուցիչ է: Ես կարող եմ Ձեզ մի այլ օրինակ բերել, որը առաջնի վրայ պատմական եղելութեան առաւելութիւնը ունէ: Պատմութիւնից Ձեզ ամենքին յայտնի են խաչակրաց ութն անգամ կրկնած արշաւանքները Սելջուկների դէմ, սուրբ երկիրը նուաճելու համար և որանք, սկսած 1096 թւից, տեւեցին ոչ պակաս քան 170 տարի և աւելի անգամ: Այդքան երկար և լուծալ պատերազմներ այլադաւանների դէմ և այն՝ եւրոպական ազգերի համար այն ժամանակներում դեռ կատարեալ անծանօթ և նոցանից հեռու երկիրներում: Ոչ, այդ եղելութիւնը մենք մի առասպելի տեղ կ'ընդունէինք, եթէ նա մեզնից ոչ շատ հեռու դարերում անցած և ամենաճիշդ վկայութիւններով հաստատուած չ'լինէր: Առասպելի տեղ կ'ընդունէինք այն պատճառով, որ նորան փաստի տեղ ընդունելու համար մենք պիտի ենթադրէինք եւրոպական ազգերի մօտ մի կրօնական մոլեռանդութիւն, որը հազիւ կարող էր թող տալ այդ ազգերին քաղաքակրթութեան մէջ անել այն առաջադիմութիւնները, որ նոքա այն ժամանակից ի վեր արել են: Իսկ եթէ այդ այդպէս է, ինչ մեծ գին պէտք է ունենայ պատմաբանի համար մի հետազոտութիւն այդ ժամանակներին վերաբերեալ, որը մեր աչքը բացէր մի անըպատելի հանգամանքի վրայ, որով կ'մեկնուէր ոչ թէ այն ժամանակուայ կրօնասիրութիւնը, այլ քօչելու, գաղթելու սէրը, հայրենիքը տարիներով թողնելու պատրաստութիւնը: Արդ մի գիտնականի հետազոտութիւն մեզ ծանօթացնում է մի այդպիսի հանգամանքի հետ: Դիւրօգը լա Մալլը, հիմնուելով այն դարերից մնացած վանապատկան գիւղերի «օջախ»-ների թւի և այլ հետա-



գօտութիւնների վրայ, կարծում է, որ կարելի է ընդունել, թէ 14. դարում Ֆրանսիան դեռ ամենապակասը այնքան բնակիչներ ունէր, որքան այսօր և մի այլ գիտնական, Լէօպօլդ Դրլիզլ, Հիմնուելով այն դարերի տասն նորդ կոչուած եկեղեցական հարկերի ցուցակների և այլ դօկումենտների վրայ, իրան բաւականի հակուած է ցոյց տալիս դէպի նոյն կարծիքը: Իսկ եթէ այդ կարծիքը ճշմարիտ լինի, այդ կ'ըշանակէր, թէ Ֆրանսիան, այն ժամանակուայ հանգամանքների համար, շատ և շատ խիտ ազգաբնակութիւն ունէր, այնպէս որ խաչակրաց արշաւանքների գաղափարը շատ համապատասխանում պիտի լինէր ֆրանսիացիների և գուցէ այլ ազգերի գաղթական ձգտումներին: Խաչակրաց արշաւանքների գաղափարը այդպիսով կարող էր միայն ուղղութիւն տւող և ոչ միակ որոշող ոյժ եղած լինել: Բայց խոստովանուեցէք, Տիկիւններ և Պարոններ, որ պատմաբանի համար այդ հանգամանքը չէ կարող անտարբեր լինել:

Թող ինձ ծուռ չ'հասկանան, ես չեմ ուզում ասել, թէ ազգաբնակութեան աճումը և խտութեան աստիճանը մեզ ամեն բան կ'բացատրեն. իմ ասելս միայն նորանումն է կայանում, որ նոքա հասարակաց շատ երեւոյթների պատճառներ են և այդ պատճառով աճման և խտութեան աստիճանները իւրաքանչիւր ազգի և պատմութեան այլ և այլ շրջանների համար ուսումնասիրելը կարեւոր բան պէտք է համարել: Այս ասած, անցնենք թւանշաններին և տեսնենք, թէ ինչպէս է վճռվում հարցը եւրոպական արդի ազգերի համար:

Այս հարցով մի երկրի ազգաբնակութիւնը աճել է կամ աճում է, թէ ոչ, երկու բան կարելի է հասկանալ. նորան կարելի է հասկանալ մի անգամ այս եղանակով, թէ արդեօք վերջին ժողովրդագրութիւնը աւելի բնակիչներ

ցոյց տուեց քան մի տասը, քսան և այլն տարի առաջ արած ժողովրդագրութիւնը, թէ ոչ. բայց հարցը կարելի է և այսպէս հասկանալ, թէ արդեօք, եթէ ժողովուրդը բազմացել է, այդ բազմանալը, այդ աճումը նոյն ժողովրդի ոյժովն է եղած, թէ ոչ: Որովհետեւ, Տիկիւններ և Պարոններ, մի երկրի բնակիչներ կարող են բազմանալ ոչ թէ միայն ժողովրդի սեպհական աճելով, այլ և օտար երկիրների գաղթականներով. իսկ սեպհական աճումը այն է, որ ծրնունդներ աւելի են, քան մահի պատեններ: Քաղաքատնտեսի համար բազմանալու այդ երկու եղանակները եւս կարեւոր են և հետաքրքիր, բայց մի երկրի ապագայի համար, հարկ չ'կայ ասել, անհամեմատ աւելի միջիթարական պէտք է լինի, եթէ ժողովուրդը իւր սեպհական աճումով աճէ, քան այլ երկիրներից եկածներով: Քաղթականները մեծ մասամբ բանւոր դասիցն են, և նոցա համար նոցա հիւրասիրող երկիրը աւելի վաստակի, փող աշխատելու մի աղբիւր է, քան մի բուն հայրենիք այն բոլոր իղէալական հրապոյրներով, որոնք կապուած են հայրենիքի գաղափարի հետ: Բայց տւողապէս աճող ազգերը նոքա են, որոնք աճում են ծնունդների առաւելութեամբ մահերի վրայ. գաղթականութիւնը միայն նուազեցնում է կամ աւելացնում է այդ աւելորդից պատճառած աճումը, ուրեմն նա խաղում է միայն երկրորդական դեր:

Ծանօթանանք այժմ ազգաբնակութեան աճման մի քանի երեւոյթների հետ, Հիմնուելով այն ստատիստիկական նիւթերի վերայ, որ մենք ունենք եւրոպական երկիրների մասին սկսած այս դարուայ սկզբից մինչ մեր օրերը: Սկսենք նորանից, թէ արդեօք եւրոպական ազգերը աճում են, թէ նուազում:

Բոլոր եւրոպական ազգերը այն ժամանակներից, երբ



սովը և զանազան վարակիչ հիւանդութիւնները, որպէս ժանտախտ, խօլերա և այլն կամ դադարել են մուտք գործել Եւրոպայ, և կամ աւելի սակաւ են սկսել երեւալ, ուրեմն մանաւանդ մեր դարում, աճել են. բացառութիւն կազմել է միայն Իրլանդիան, որի ժողովուրդի դրութիւնը Եւրոպայի ամենայետին ազգի դրութիւնից վատթար է և որի ազգաբնակչութիւնը, քառասնական թուականներում գետնախնձորի հունձի ոչնչանալուց պատճառած զարհուրելի սովից և դորանով առաջացած գաղթական շարժումից միանգամայն կարգից դուրս կերպով նուազեց: Բերենք մի քանի օրինակներ եւրոպական ազգերի աճումը այս դարում ցոյց տալու համար և այդ նպատակով վերցնենք այնպիսի երկիրներ, որոնց տարածութիւնը պատերազմական յաջողութեան թէ անյաջողութեան պատճառով կամ ոչինչ և կամ քիչ բանով են փոփոխուած: Անգլիան (Շոտլանդիայով և Իրլանդիայով միասին) ունէր 1831 թվականին 24,392,485 բնակիչներ. տասը տարի յետոյ, 1841-ին նա ունէր 27,057,923 բնակիչներ, կրկին տասը տարից յետ նա ունէր 27,725,949 (քիչ աւելնալուն պատճառը վերը լիշած Իրլանդական աղետն էր): 1861 թվին 29,321,288, 1831 թվին՝ 31,845,379: Իսկ Անգլիան մենակ, առանց Շոտլանդիայի և Իրլանդիայի ունէր 1831 թվին 13 միլիոն 800 հազար բնակիչներ, քառասուն տարուց յետ, 1871 թվին — 22 միլիոն 700 հազար բնակիչներ. Շվեցիան 2,888,000 բնակիչներից, որ նա ունէր 1831 թվին, անցաւ 4,168,000-ի 1870 թվին: Բուեն Ռուսիան (միայն եւրոպական Ռուսիան առանց Լեհաստանի և Ֆինլանդիայի) այս դարուայ սկզբում ունէր 34 միլիոն բնակիչներ, 1851 թվին նա ունէր արդէն 55 միլիոն 800 հազար, իսկ 1870 թվին՝ 70 միլիոն 467 հազար բնակիչներ:

Բելգիան, որը 1846 թվին ունէր 4 միլիոն 337 հազար բնակիչներ, երեսուն տարիների մէջ, մի միլիոնով աճեց, որովհետեւ 1876 թվին նա ունէր 5 միլիոն 336 հազար բնակիչներ: Այդ երկիրների հետ համեմատած, Ֆրանսիան շատ քիչ է աճել. 1836 թվի վիճակագրութեան համեմատ, այդ երկիրը ունէր 33 միլիոն 540 հազար բնակիչներ, քսան տարի յետոյ 1856 թվին՝ 36 միլիոն 39 հազար, կրկին քսան տարի յետոյ 1876 թվին՝ 36 միլիոն 905 հազար բնակիչներ. իսկ է, այդ վերջին ժամանակամիջոցում Ֆրանսիան կորցրեց Ելզաս — Լոտարինգիան մի և կէս միլիոն բնակիչներով, բայց նա ձեռք բերեց Սալօյան և Նիցցան 689 հազար բնակիչներով:

Ես կարող էի թւանշանները շարունակել. բայց այդ ձանձրացուցիչ կ'լինէր Զեզ համար, մանաւանդ որ նոքա բոլորն էլ միլիոնի վկայութիւնը կ'տալին, այն է, որ բացառութեամբ Իրլանդիայի, բոլոր Եւրոպական ազգերը աճել են և աճում են: Բայց մենք դորանից աւելի բան էլ չգիտենք. մենք գիտենք այժմ, որ այդ ազգերը ոչ թէ միայն աճում են, այլ և այն, որ նոքա աճում են կանոնաւոր կերպով, առանց ընդհատութեան և մենք գիտենք միլիոնի ժամանակ, որ այդ բոլոր ազգերի աճումը միլիոնի չափով չէ լինում, այլ իւրաքանչիւրը նոցանից ունէ, ի հարկէ միայն մօտաւորապէս խօսած, իւր աճման պրօցէնտը:

Բնակիչների աճելութիւնը, մի ազգի կենդանութեան, կեանքի հետ մրցելու ընդունակութեան նշան է, երբ դորա հետ միասին հարստութիւնները աւելանում են: Կան աշխարհիս երեսին շատ ազգեր, որոնք տարեցրտարի փոքրանում են, առատ և առողջ սերունդ տալու անընդունակ լինելով. Աւստրալիայի և Ովկիանիայի շատ ցեղեր այդ հանգամանքի մէջն են: Բայց եթէ աճելու



թիւնը կենդանութեան, առողջ ցեղի պատկանելու նշան է, համարձակ կարելի է ասել, որ կանոնաւոր, անընդհատ և, որքան կարելի է միատեսակ, միշտ մի յայտնի չափսով աճելը — քաղաքակրթութեան, կուլտուրի նշան է: Ես Ձեզ կ'իշխեմ, Տիկիններ և Պարոններ, մի րոպէ այս խորհուրդաժողովութեանը հետեւել. ե՞րբ կարող է մի ազգ կանոնաւոր կերպով աճել: Այդ կարող է պատահել միայն այն ժամանակ, երբ ամեն տարի մօտաւորապէս միևնոյն չափով պսակներ կատարուեն. որովհետեւ մենք գիտենք արդէն, և դորա մասին վերը խօսացուեց, որ ամեն ազգ իւր բերրութեան չափսը ունէ, այնպէս որ, եթէ ամեն տարի միևնոյն չափսով պսակներ կատարուեն, մենք հիմք կ'ունենանք ընդունելու, որ և ամեն տարի մօտաւորապէս հաւասար թւով երեխաներ պիտի ծնուեն. մնում է ուրեմն, կանոնաւոր և անընդհատ աճելու համար, որ բացի պսակների հաւասարութիւնից, մահացութիւնն էլ մի երկրում ամեն տարի մօտաւորապէս միևնոյն չափսի վրայ մնայ: Բայց ինչո՞ւ առաջ աւելի մեծ անկանոնութիւններ էին պատահում պսակների և մահերի թրււերի մէջ: Պատասխանը դժուար չէ գտնել. վարակիչ հիւանդութիւնները մի երկրի ամբողջ ազգաբնակչութեանը երբեմն կէսը և աւելին անգամ զոհ էին տանում, ուրեմն ոչ թէ միայն ծնունդների չափ, այլ և աւելի. իսկ այժմ Եւրոպայում, ուղում եմ ասել բարձր քաղաքակրթութեան շրջանակում, այդ տեսակ հիւանդութիւններ կամ այնքան յաճախ մուտք չեն գործում, որովհետեւ միջոցներ են գործ դրվում, որ այդ հիւանդութիւնները, որոնք Արևելքում, Ասիայումն են ծնվում, մինչ Եւրոպա չ'հասնեն. և կամ եթէ մուտք գործում են՝ նոքա այսօր այնքան զարհուրելի չեն, որքան առաջ: Ահա Ձեզ որպէս սպացոյց մի կարճ թւական պատկեր

անցեալից և ներկայից. թողնենք դեռ 1348 թւի ժանտախտը, որի զոհերի թիւը հաստատ չէ, բայց որի առիթով, հիմնուած նորագոյն պատմական հետազօտութիւնների վերայ, կարելի է հարցնել, թէ այն թւականին մնաց արդեօք կենդանութեան մէջ Եւրոպայի այն ժամանակուայ բնակիչների գէթ կէսը... Մեզ աւելի մօտ ժամանակներս, մի երկու հարիւր տարի առաջ, 1663 թւին Լօնդօնում մեռան ընդամենը 15 հազար 300 անձեր, երեւի մօտաւորապէս նոյնքան, որքան սովորապէս. հետեւեալ տարում մեռնողների գումարը բարձրացաւ մինչ 97 հազար 306, որից 68,596 ժանտախտին զոհուեցին: Ըստ Դօքտոր Ֆարրի այդ այնքան կորուստ էր այն ժամանակուայ Լօնդօնի համար, որքան այդ կ'լինէր այժմեայ Լօնդօնի համար, եթէ այդ քաղաքում մի տարուայ մէջ 600 հազար մարդիկ մեռնէին: Համեմատեցէք այժմ նոր ժամանակների վարակիչ ցաւի՝ խօլերայի հետեւանքները. դորանով մեռան Լօնդօնում 1832/33 թւին 6,729, 1848/49 թւին՝ 14,610, 1854 թւին՝ 11,661 և կամ 17,919 մարդիկ, եթէ հաշուելու լինինք խօլերայի նման հիւանդութիւններից մեռածները ևս: Ամբողջ Ֆրանսիայում տարաւ խօլերան 1832 թւին՝ 102,735 մարդիկ, 1849 թւին՝ 100,110 և 1854 թւին՝ 145,541 (Խրիմի պատերազմը): Իտալիայում տարաւ խօլերան 1866/67 թւին 147,682 երկու սեռից զրեթէ բոլորովին հաւասար անձեր: Այդքան օրինակներ բաւական են ապացուցանելու համար, որ եթէ մեծ և անսովոր կոտորածներ դեռ պատահում են Եւրոպայում, վաղուայ ժամանակներում նոքա աւելի մեծ էին:

Հիւանդութիւններից յաճախ էր սովր և կամ ցորենի մեծ անառատութիւնը. սովից մարդիկ մեռնում էին, մանաւանդ խեղճ դասից, իսկ դորա հետ միասին պսակ-



ների թիւը այդպիսի տարիներում նուազում էր. կրկին մի պատճառ ուրեմն, թէ ինչու ազգաբնակութիւնը շարունակ և կանոնաւոր կերպով չէր կարող աճել: Սովը կամ թանգութիւնը երբեմն շատ յաճախ էր պատահում և, ինչ աւելի վտանգաւորն է, երբեմն տարիներով շարունակվում էր: Բայց այդ առարկայի հետ, Տիկիններ և Պարոններ, Դուք պիտի ծանօթ լինէք. մի երեք տարի առաջ Հայաստանում պատահածը Ձեզ ծանօթացրած կը լինի սովի և թանգութեան դադափարի հետ: Արդ, ինչ կ'կարծէք—Եւրոպայում սով ասած բանը դեռ աւելի արմատական կերպով է ոչնչացել, քան ժանտախտը: Սովը անկարելի է դառել Եւրոպայում շնորհիւ երկաթուղիական և նաւագնացութեան բնդարձակ զարգացման և առևտուրի մէջ մտցրած մրցութեան. և ոչ թէ միայն սով չ'գիտէ այժմեայ Եւրոպան, այլ նա հացի մեծ թանգութիւն էլ չ'գիտէ, որովհետեւ, շնորհիւ գլխաւորապէս վերը լիշած հանգամանքներին, ցորենի գները Եւրոպայում շատ չեն տարբերվում, երբէք թանգութիւն զգացնելու չափ չեն բարձրանում, թէպէտև ցորենի, որպէս նաև երկրագործական այլ բերքերի գները Եւրոպայում աւելի բարձր են և բոլոր խիտ բնակեցրած երկիրներում պէտք է անպատճառ աւելի բարձր լինեն: Բայց եթէ Եւրոպայում ցորենի գինը առհասարակ աւելի բարձր է, քան ուրիշ տեղերում, այդ դեռ չէ նշանակում, որ ցորենը Եւրոպայում միշտ թանգ է, որովհետև գների բարձրութեան համեմատ այնտեղ նաև ժողովրդի ընդհանուր հարստութիւնը աւելի մեծ է, քան այլ տեղերում:

Տարափոխիկ սաստիկ հիւանդութիւններից և սով ու թանգութիւնից զատ կար առաջ նաև մի այլ հանգամանք, որը խանգարում էր ազգաբնակութեան կանոնաւոր աճելուն, այդ՝ այն անկատար դրութիւնն է,

որի մէջ գտնվում էր պատերազմական արհեստը, համեմատած այդ արհեստի այժմեայ դրութեան հետ: Նախ պէտք է այս ի նկատի առած, որ վաղ պատերազմներ շատ աւելի յաճախ էին պատահում, քան այժմ, և դորա ամենագլխաւոր պատճառը նորանում պիտի որոնել, որ վաղ տէրութիւն տէրութեան հետ, ազգ ազգի հետ այնքան մեծ մտաւոր և առևտրական յարաբերութիւններ չունէին, որքան այժմ. իսկ ուր ազգերի մէջ մտաւոր, բարոյական և նիւթական համերաշխութիւնը նուազ է, այնտեղ նաև իրար դէմ վրդովուելը, իրար ատելը և իրար հետ կռուելը աւելի հեշտ է: Միւս կողմից Եւրոպայի այժմեայ տնտեսական ոյժի հիմքերը նշանաւոր կերպով փոխուել են. գործարանական արդիւնաբերութիւնը այժմ, Եւրոպայի ամենազարգացած երկիրների համար, գերակշիռ դեր է խաղում, մինչդեռ առաջ գործարանութիւնը, համեմատած երկրագործութեան հետ, միայն երկրորդական տեղ էր բռնում: Իսկ գործարանական արդիւնաբերութիւնը չի կարող մեծ ընդհատումներ, երկար պատերազմներ համբերել, նախ, որովհետև մի երկրի գործարանականութիւնը մեծ մասամբ հիմնուած է մի այլ երկրի հում բերքերի վրայ, իսկ երկրորդ, որովհետև մի երկրի գործարանական արտադրութիւնները երբեմն ահագին չափսերով ծախվում են այլ երկիրներում: Եւ որովհետև Եւրոպայի երկիրները այդպէս իրար հետ կապուած են, նոցա համար մի աւելի մեծ աղետ չի կարող լինել, քան երկար պատերազմներ: Պատերազմական արհեստը, իւր կատարելագործութեան մէջ, կարծես հետևել է տնտեսական այդ նոր պահանջներին. շնորհիւ ընդհանուր զինւորագրութեան, որով այժմեայ մեծ զօրքերը Եւրոպայի մեծ տէրութիւններում կռուի ժամանակ հասցվում են մինչ մի միլիոն զինուորների և աւելիին անգամ. շնոր-



Հիւ երկաթուղիները և զօրքերի մէջ մտցրած խիստ կանոններին, դիսցիպլինային և մթերքների նախապատրաստութեան, որոնցով կարելի է դարձուած մի քանի շաբաթներում մի միլիօնաչափ զօրք սահմանի վերայ կենդրոնացնել. շնորհիւ հրաձիգ գէնքերի կատարելագործութեան, որը այժմ թույլ է տալիս հրացանի գնդակը մինչ, եթէ չեմ սխալվում, մօտ մի վերստ և կէս հեռաւորութեան հասցնել և միւսնոյն հրացանը, աննշան ընդհատութեամբ տասնեակ և հարիւրաւոր անգամ պարպել. շնորհիւ, վերջապէս, հայրենասիրական զգացմունքի արթնութեան, ժողովուրդի աւելի բարձր մտաւոր զարգացման, պարտաճանաչութեան աւելի գեր աստիճանին և նիւթական բարձրացած կարողութեան, որոնցով միայն կարելի է դարձրած վերը յիշած կատարելագործութիւնները գործի դնել. շնորհիւ, ասում եմ, այդ բոլորի և գուցէ այլ նորմուծութիւնների, որոնց գիտենալը մասնագէտի գործ է, այսօր թշնամական ոյժերը հանդիպում են իրար աւելի մեծ ոյժգնութեամբ, աւելի մեծ սաստկութեամբ, քան առաջ և, նոյն իսկ այդ պատճառով, թույլ կողմը աւելի արագ է սպառում իւր ոյժերը. իսկ ուժեղը նոյն չափով աւելի արագ է վերջացնում յաղթութեան գործը: Ահա ինչու այսօր ամենաահեղ պատերազմը անգամ տևում է ոչ աւելի, քան մի օրէ և կէս տարի, մի տարի վերջապէս և ոչ թէ ամբողջ տարիներով և կամ տասնեակ տարիներով, որպէս այդ առաջ էր լինում: Եւ չեմ ուզում շատ հեռու գնալ և օրինակները բազմացնել. լիշեցէք 17-եր. դարից միայն երեսուն տարուայ պատերազմը, 18-եր. դարից՝ եօթը տարուայ պատերազմը: Արդ, ազգաբնակչութեան աճման և կանոնաւոր աճման համար բոլորովին անտարբեր չէ, թէ մի պատերազմ կարճ է տևում, թէ երկար: Առաջուայ երկար տևող պատե-

րազմները թէպէտև համեմատապէս աւելի քիչ մարդիկ էին կոտորում պատերազմական դաշտերում, քան այժմ, բայց նոցա երկրին տուած վնասը աւելի մեծ էր, քան այն, ինչ տալիս են այժմեայ պատերազմները: Գեռ սովորած չը լինելով յարգել թշնամուն, սովորած չ'լինելով խիստ դիսցիպլինային, չունենալով և կամ չ'յարգելով միջազգային դաշնադրութիւնները, պատերազմող կողմերը նեղացնում էին գիւղացիներին, աւերակ էին դարձնում գիւղ ու քաղաքները կողոպտելով ժողովուրդը. ինչ խօսք կայ, որ նոյն իսկ ժողովուրդը, անապահովութեան և վախի զգացմունքի ազդեցութեան ներքոյ կամ մասնակցելով անվերջանալի կռիւներին, իւր խաղաղ սովորութիւններից կամաց կամաց յետ էր սովորում և ընտելանում էր հակաքաղաքակրթական և բարբարոս գաղափարների հետ, որոնք, նոյն իսկ պատերազմից յետոյ, տասնեակ տարիներով իշխում էին թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքի վերայ: Գողութիւնը և աւագակութիւնը կարող էին և շարունակուել, բնաւորութեան կոպտութիւնը և գողոգութիւնը կարող էին մնալ և պատերազմից յետոյ: Մի խօսքով, վաղ պատերազմները ըստեղծում էին հանգամանքներ, որոնց մէջ ազգաբնակչութիւնը ամբողջ տարիներով չէր կարող աճել, իսկ եթէ աճում էր, այդ լինում էր անկանոն կերպով. մինչդեռ այսօր, պատերազմների զարմանալի կարճատևութեան պատճառով, պատերազմող երկրի ներքին կեանքը, բնակիչների վարք ու բարքը շօշափելի կերպով չէ փոխվում պատերազմի վերջանալուց յետոյ: Ստատիստիկական թվանշաններով հաստատուած է, որ պատերազմից պատճառած պսակների սակաւութիւնը և մահի պատահների յաճախութիւնը, ազգաբնակչութեան թվի նկատմամբ, մասամբ անվնաս են անցնում նորանով, որ պատերազմից



յետոյ, մահի պատեհները գրեթէ նոյնը մնալով, որպէս առաջուայ խաղաղ տարիներում, պսակների թիւը և դորա հետ ծնունդների թիւը սովորականից անհամեմատ աւելի են լինում: Շատ օրինակներից բերենք այստեղ միայն մէկը. Փրանսիայում, չհաշուելով Էլզաս - Լոտարինգիան, կատարուեցին պատերազմից մի տարի առաջ, այն է 1869 թվին 303,482 պսակներ, ծնունդներ 948,526 առողջ երեխաներ և մեռան նոյն տարում 864,320 հոգի: Հետեւեալ տարին, ամռան, պատերազմը սկսեց. պսակների թիւը եօթանասուն հազարով պակսեց, ծնունդների թիւը, հասկանալի պատճառով, մնաց գրեթէ միևնոյնը, իսկ մեռնողների թիւը 182 հազարով աւելացաւ: Ի նկատի առէք այժմ, որ պատերազմի դաշտերում անմիջապէս սպանուողներ աւելի քիչ են լինում քան թէ պատերազմում վիրաւորուածները, որոնք միայն յետոյ են մեռնում. իսկ ծնուողներ պատերազմից անմիջապէս յետոյ աւելի քիչ պիտի լինեն, որովհետեւ իննը նախորդ ամիսներում պսակներ աւելի քիչ պիտի կատարուած լինէին, որպէս և հաստատուեց: Այդ հանգամանքներով մեկնվում են այն թւանշանները, որմենք պիտի բերենք ներքե 1871 թվի համար: Հետեւեալ 1872 և 1873 թվականներին, որպէս շուտով կ'տեսնենք, պսակների թիւը, չնայելով ազգաբնակչութեան ահագին կորուստներին, նախորդ երկու տարիներում սովորականից շատ աւելի էր: Կ'խնդրեմ, որ ինքներդ համեմատէք հետեւեալ թւերը իրար հետ:

|           | Պսակներ | Կենդանի<br>ծնունդներ | Մահի<br>պատեհներ |
|-----------|---------|----------------------|------------------|
| 1869 թվին | 303,482 | 948,526              | 864,320          |
| 1870      | 223,705 | 943,515              | 1,046,909        |
| 1871      | 262,476 | 826,121              | 1,271,070        |
| 1872      | 352,754 | 966,000              | 793,064          |

|      |         |         |         |
|------|---------|---------|---------|
| 1873 | 321,238 | 946,364 | 844,588 |
| 1874 | 303,113 | 954,652 | 781,706 |
| 1875 | 300,427 | 950,975 | 845,062 |

Այժմ ամփոփենք մեր բոլոր ասածները ազգաբնակչութեան ուժման կանոնաւորութեան վերայ: Մենք տեսանք, որ կանոնաւոր, այսինքն ամեն տարի աճելու և այն՝ ամեն տարի մօտաւորապէս միևնոյն չափով աճելու համար, հարկաւոր է, որ մի երկրի մէջ չ'լինեն, չը պատահեն պսակները խանգարող և մեռնողների թիւը շատացնող հանգամանքներ: Բայց այդպիսի հանգամանքներ Եւրոպայի համար առաջ անհամեմատ աւելի շատ կային, քան այժմ, 1) ժանտախտը Եւրոպայում այլ ևս չէ երևում. իսլերան. որը նոր ժամանակների հիւանդութիւն է և որը այս դարում բազմիցս անգամ արշաւանքներ է գործել դէպի Եւրոպայ և մեծամեծ զոհեր տարել, ժանտախտի նման զարհուրելի չէ: 2) սովը և կամ հացի չափազանց թանգութիւնը, որոնք առաջ սովորական և յաճախ կրկնուող երևոյթներ էին, Եւրոպայում այժմ և արդէն վաղուց, չ'կան. 3) պատերազմները վաղ անհամեմատ աւելի երկար էին տևում, քան այժմ և աւելի էին վնասում թէ մարդկեր անց և թէ գոյքերին, քան այժմ:

Իսկ քոուցէ մոռացած չ'լինէք, Տիկիներ և Պարոններ, որ այս բացատրութիւնները բերելու նպատակն էր ցոյց տալ, որ, եթէ ազգաբնակչութեան աճումը մի ազդի կենդանութեան, առողջութեան հետեւանքն է, կանոնաւոր և անընդհատ կերպով աճելը — քաղաքակրթութեան նշան է: Աճումը, ինքն ըստ ինքեան, ցոյց է տալիս, ոչ մի ազգ քաղաքակրթութեւն ընդունակ է, իսկ կանոնաւոր աճումը ցոյց է տալիս, որ այդ ընդունակութիւնը արդէն գործի է դրուած յառաջագիմութիւն արուած է: Բայց, արդեօք կատարեալ կանոնաւոր աճում իրագործուած է մի որեւիցէ երկ-



րում? Ոչ. ինչ կարելի է հաստատ և համարձակ ասել, այդ միայն այն է, որ Եւրոպայի գրեթէ բոլոր երկիրներում ազգաբնակչութիւնը, շատ սակաւ դիպուածների բացառութեամբ, ամեն տարի աճում է և երկրորդ, որ այդ աճումը այս դարում աւելի հաւասար կերպով է կատարւում, քան առաջ: Ասում եմ միայն աւելի հաւասար, որովհետեւ եթէ իսկապէս համեմատելու լինենք մի երկրի ազգաբնակչութեան աճելութեան աստիճանները ամեն մի տասը տարիների համար, կ'տեսնենք նոցա մէջ երբեմն շատ մեծ զանազանութիւններ:

Ես կարծում եմ, Տիկիներ և Պարիներ, որ այժմ տեղն է մի քանի թւանշաններ Զեր ձեռք տալ, որպէս զի կարողանաք մի գաղափար ունենալ եւրոպական ազգերի աճման աստիճանների մասին և այդ նպատակով օգտուենք այն բոլոր ստատիստիկական տեղեկութիւններից, որ մենք ունենք այդազգերի մասին սկսեալ այս դարուայ սկզբից մինչ վաթսուս թւականները: Այն ժամանակ կ'իմանանք, որ ամենից շատ աճող երկիրը այն է, որը ամեն տարի բնակիչների 1. 45 պրօցէնտով է աճում, դա Ռուսիան է. լետոյ գալիս են Սաքսոնեան 1. 41 պրօցէնտով, Անգլիան (առանց Շոտլանդիայի և Իրլանդիայի) 1. 37 պրօցէնտով, Պրուսիան 1. 16 պրօցէնտով և այլն շարունակ մինչ Ֆրանսիան, որի ժողովուրդը Եւրոպայում ամենից քիչ աճողներիցն է, այնէ՝ տարեկան միայն 0. 48%: Մնացած ազգերի մեծ մասը բռնում են դոցա մէջ տեղը:

Այդ մի քանի տրուածներից Դուք կարող էք արդէն եզրափակել, որ, մինչդեռ մի ազգ, մի երկրի բնակիչներ մօտ 70 տարիներում կրկնապատկուած են, միւս երկիրներում կրկնապատկուելու համար հարկաւորվում են ութսուն, հարիւր և մինչև անգամ երկու հարիւրից աւելի տարիներ: Մենք հայերս այդ հանգամանքներից որի մէջն ենք արդեօք....

## ՍԽԱԼՆԵՐ

| Երեւ | Տոյ   | Տղաւծ է    | Կարգւ          |
|------|-------|------------|----------------|
| 24   | 2     | դառան      | դառաւ          |
| 30   | 11    | տար        | տային          |
| 31   | 6     | այդ        | այն            |
| 62   | 16    | տեսակետը   | տեսակէտից      |
| 64   | 22-23 | յատկութիւն | յատկութիւններ. |



1861

| Year | 2nd | 3rd | 4th |
|------|-----|-----|-----|
| 1861 | 11  | 11  | 11  |
| 1862 | 11  | 11  | 11  |
| 1863 | 11  | 11  | 11  |
| 1864 | 11  | 11  | 11  |
| 1865 | 11  | 11  | 11  |
| 1866 | 11  | 11  | 11  |
| 1867 | 11  | 11  | 11  |
| 1868 | 11  | 11  | 11  |
| 1869 | 11  | 11  | 11  |
| 1870 | 11  | 11  | 11  |
| 1871 | 11  | 11  | 11  |
| 1872 | 11  | 11  | 11  |
| 1873 | 11  | 11  | 11  |
| 1874 | 11  | 11  | 11  |
| 1875 | 11  | 11  | 11  |
| 1876 | 11  | 11  | 11  |
| 1877 | 11  | 11  | 11  |
| 1878 | 11  | 11  | 11  |
| 1879 | 11  | 11  | 11  |
| 1880 | 11  | 11  | 11  |
| 1881 | 11  | 11  | 11  |
| 1882 | 11  | 11  | 11  |
| 1883 | 11  | 11  | 11  |
| 1884 | 11  | 11  | 11  |
| 1885 | 11  | 11  | 11  |
| 1886 | 11  | 11  | 11  |
| 1887 | 11  | 11  | 11  |
| 1888 | 11  | 11  | 11  |
| 1889 | 11  | 11  | 11  |
| 1890 | 11  | 11  | 11  |
| 1891 | 11  | 11  | 11  |
| 1892 | 11  | 11  | 11  |
| 1893 | 11  | 11  | 11  |
| 1894 | 11  | 11  | 11  |
| 1895 | 11  | 11  | 11  |
| 1896 | 11  | 11  | 11  |
| 1897 | 11  | 11  | 11  |
| 1898 | 11  | 11  | 11  |
| 1899 | 11  | 11  | 11  |
| 1900 | 11  | 11  | 11  |



60/  
489

ՀՀ Ազգային գրադարան



NL0596842



